

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Անսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>1/37</i> |

| <i>Կազմեց</i> | <i>Հավանության արժանացավ</i> | <i>Հաստատեց</i> |
|---|---|--|
| Հաշվապահական հաշվառման վարչության պետ-Գլխավոր հաշվապահ՝ Գ.Հարությունյան «21» 12. 2012թ. | Վարչության նախագահ՝ Տ. Դավթյան «28» 12.2012թ. Վարչության անդամներ՝ Ա. Հակոբյան «28» 12.2012թ. Մ. Դավթյան «28» 12.2012թ. Վ. Դալյան «28» 12.2012թ. Վ. Մուրադյան «28» 12.2012թ. Գ. Հարությունյան «28» 12.2012թ. | Խորհրդի նախագահ՝ Ա.Տեր-Տաճատյան «12» 03.2013թ. Հաստատվել է 06.03.2013թ.-ի քիվ 3 արձանագրության 2-րդ հարցով |

Առարկան

««Կոնվերս Բանկ» ՓԲԸ հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ» (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից Բանկի ակտիվների, պարտավորությունների և կապիտալի հաշվապահական հաշվառման միասնական վարման և կիրառման քաղաքականությունը:

Կիրառման ոլորտը

Սույն Քաղաքականությունը կիրառվում է Բանկի բոլոր կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից:

Առնչվող փաստաթղթեր

ՀՀ օրենքը «Հաշվապահական հաշվառման մասին»
Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ
Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ
ՀՀ ԿԲ Խորհրդի որոշմամբ և ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլան» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի,

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Անսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>2/37</i> |

վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգ»

Հաշվապահական հաշվառմանը վերաբերվող այլ օրենքներ և ենթօրենսդրական ակտեր
 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումներ
 Բանկի Խորհրդի որոշումներ
 Բանկի Վարչության որոշումներ
 Բանկի Գործադիր տնօրենի հրամաններ

Հապավումներ

ՀՀՄՍ - Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ
 ՖՀՄՍ - Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Քաղաքականության մշակման հիմքում ընկած են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերվող այլ օրենքների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների, «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի», «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգի» և այլ իրավական ակտերի հիմնական պահանջները:

1.2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որոշակի սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջություն է, որոնք կիրառվում են Բանկի կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով:

Սույն Քաղաքականությամբ սահմանված հիմնական դրույթների հիման վրա հաշվապահական հաշվառման վարման, հարկային հաշվառում վարելու, ՀՀ ԿԲ ներկայացվող և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման նպատակով Բանկում գործում են և կարող են ընդունվել ներքին իրավական ակտեր:

1.3. Բանկը պետք է փոփոխի Քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը.

- պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով, կամ
- հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

2. ՆՊԱՏԱԿԸ

2.1. Բանկի ֆինանսական տեղեկատվությունը հաշվառվում և ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀՄՍ-ներին, ՖՀՄՍ-ներին, հաշվապահությանն առնչվող օրենքներին, ենթօրենսդրական ակտերին և այս Քաղաքականությանը համապատասխան:

2.2. Ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթում պարունակվող և ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի.

2.2.1. տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար.

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>3/37</i> |

2.2.2. արժանահավատ՝ այն առումով, որ այն.

- ճշմարիտ ներկայացնի Բանկի գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը, արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլև իրադարձությունների և գործառնությունների տնտեսական բովանդակությունը.
- չեզոք՝ այսինքն զերծ կանխակալությունից.
- հաշվենկատ:

2.2.3. ամբողջական՝ բոլոր էական դրսևորումներում.

2.2.4. հասկանալի.

2.2.5. համադրելի.

2.2.6. անընդհատ,

և պետք է կիրառվի հաշվեգրման սկզբունքը:

2.3. Հաշվապահական հաշվառման կոնկրետ ստանդարտի և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերի բացակայության դեպքում, Բանկի ղեկավարությունը, ելնելով նպատակահարմարությունից և օբյեկտիվ անհրաժեշտությունից, հանձնարարում է Բանկի համապատասխան կառուցվածքային՝ մշակելու և ներկայացնելու Բանկի ղեկավար մարմինների հաստատմանը՝ Բանկի ակտիվներին, պարտավորություններին, սեփական կապիտալին և այլ հարցերին վերաբերվող կանոնակարգման ենթակա հարցերը, որով կապահովվի Բանկի հաշվապահական հաշվառման ներդաշնակ քաղաքականության վարումը, ինչպես նաև Բանկի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին տեղին և արժանահավատ տեղեկատվության տրամադրումը:

3. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

3.1. Կանխիկ դրամական միջոցներ

3.1.1. Դրամական միջոցներ - դրամարկղում առկա դրամական միջոցները:

3.1.2. Դրամական միջոցների համարժեքներ - կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.1.3. Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի: Հետևաբար, ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս կամ ավելի քիչ: Սեփական կապիտալում ներդրումները չեն ներառվում դրամական միջոցների համարժեքների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ըստ էության դրամական միջոցների համարժեքներ են, օրինակ՝ արտոնյալ բաժնետոմսերի դեպքում, որոնք ձեռք են բերվել իրենց մարման ժամկետին մոտ ժամանակաշրջանում և ունեն հետգնման որոշված ժամկետ:

3.1.4. Դրամական միջոցների և դրանց համարժեքների հոդվածների միջև դրամական միջոցների տեղաշարժերը չեն դիտարկվում որպես դրամական միջոցների հոսքեր, քանի որ այդ գործառնությունները մաս են կազմում դրամական միջոցների կառավարման, այլ ոչ թե գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեությունների: Բանկի դրամական միջոցների կառավարումը ներառում է դրամական միջոցների ավելցուկի ներդրումը դրամական միջոցների համարժեքների մեջ:

Բանկի կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրման) և/կամ արտահոսքի (ելքագրման) ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով՝ Բանկում գործող

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>4/ 37</i> |

ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

3.1.5. Բանկը գործառնական գործունեության արդյունքում ստացած համախառն դրամական մուտքերի և վճարումների հիման վրա դրամական հոսքերի մասին հաշվետվությունը կազմելիս առաջնորդվելու է ուղղակի մեթոդով:

3.1.6. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանում դրամական միջոցների հոսքերը՝ դրանք դասակարգելով ըստ գործառնական, ներդրումային և ֆինանսավորման գործունեությունների:

3.2. Թանկարժեք մետաղներ,

3.2.1. Թանկարժեք մետաղներով (ոսկու ստանդարտացված և ոչ ստանդարտացված ձուլակտորներ և/կամ դրանցով ներդրված ոսկով ավանդներ կամ քթթակցային հաշիվներ) իրականացված գործառնությունների գծով հաշվապահական ձևակերպումները տրվում են դրանց ձեռք բերման կամ ներդրման արժեքով՝ ունցիան վերափոխելով գրամի:

3.2.2. Բանկային ոսկու ձեռք բերման գնի նկատմամբ վերագնահատումներն իրականացվում են օրական կտրվածքով:

3.3. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

3.3.1. Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝ որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք՝

3.3.1.1. առկա են Բանկում՝

- աշխատանքների կատարման.
- ծառայությունների մատուցման.
- վարձակալության տալու.
- վարչական.

նպատակներով օգտագործելու համար.

3.3.1.2. օգտագործման ընթացքում պահպանում են իրենց բնաիրային տեսքը.

3.3.1.3. նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով՝ անկախ արժեքից:

3.3.2. Բանկի հիմնական միջոցները որպես գրասենյակային սարքավորում կամ կապի ու հաղորդակցության միջոցներ, հաշվողական, համակարգչային, ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, այլ հիմնական միջոցներ հաշվառման նպատակով դասակարգելիս պետք է առաջնորդվել՝ ելնելով դրանց օգտագործման նշանակությունից և նպատակներից:

3.3.3. Ոչ նյութական ակտիվն իրենից ներկայացնում է ֆիզիկական սուբստանցիայից գուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ:

3.3.4. Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան դա ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարի պարբերական բաշխումն է նրա օգտակար ծառայության ընթացքում:

3.3.5. Օգտակար ծառայությունը դա՝

- այն ժամանակահատվածն է, որի ընթացքում Բանկն ակնկալում է օգտագործել ոչ նյութական ակտիվը, կամ
- աշխատանքների, ծառայությունների այն ծավալն է, որն ակնկալվում է ստանալ (կատարել, մատուցել) ակտիվի օգտագործման միջոցով:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>5/37</i> |

3.3.6. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ժամանակաշրջանը և ամորտիզացիայի մեթոդը պետք է յուրաքանչյուր տարվա վերջում վերանայվի համապատասխան ստանդարտով սահմանված կարգով և պայմաններով:

3.3.7. Բանկը պետք է որոշի, թե արդյոք ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշակի է, թե անորոշ: Որոշակի լինելու դեպքում՝ այդ օգտակար ծառայության տևողությունը կամ օգտակար ծառայությունը ներկայացնող արտադրանքի կամ նմանատիպ միավորների քանակը:

3.3.8. Որոշելու համար, թե արդյոք ոչ նյութական ակտիվն արժեզրկված է, թե ոչ, Բանկը կիրառում է ՀՀՄՍ 36-ը: Այդ ստանդարտը պարզաբանում է, թե երբ և ինչպես է կազմակերպությունը վերանայում իր ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչպես է որոշում ակտիվի փոխհատուցվող գումարը և երբ է ճանաչում կամ հակադարձում արժեզրկումից կորուստը:

3.3.9. Ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ՝

- հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Բանկ.
- ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.3.10. Միավորի ճանաչումը որպես ոչ նյութական ակտիվ պահանջում է Բանկից ցուցադրել, որ այդ միավորը բավարարում է՝

- ոչ նյութական ակտիվի սահմանմանը.
- ճանաչման չափանիշներին:

Այս պահանջը կիրառվում է այն ծախսումների նկատմամբ, որոնք տեղի են ունենում սկզբում՝ ոչ նյութական ակտիվը ձեռք բերելու կամ դրա ներստեղծման ժամանակ, և որոնք տեղի են ունենում հետագայում՝ տվյալ ակտիվը ավելացնելու, դրա մի մասը փոխարինելու կամ ակտիվը սպասարկելու համար:

3.3.11. Ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափվի սկզբնական արժեքով:

3.3.12. Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է՝

- դրա գնման գինը՝ ներառյալ ներկրման տուրքերն ու գնման չփոխհատուցվող հարկերը՝ առևտրային զեղչերը և արտոնությունները հանելուց հետո.
- ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

3.3.13. Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստներ:

3.3.14. Ձեռք բերված հիմնական միջոցների (անկախ արժեքից) և ոչ նյութական ակտիվների միավորի հաշվառման նպատակով՝ արժեքի չափումը, ճանաչումը, հետագա ծախսումները, վերագնահատումները և դուրս գրումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀՄՍ-ներով սահմանված կարգով, ինչպես նաև Բանկում գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

3.3.15. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների միավորը ճանաչվում է որպես ակտիվ համաձայն ՀՀՄՍ 16 և 38 ստանդարտների, երբ՝

- ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և՛
- դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.3.16. Հետագա ծախսումները ճանաչվում են ակտիվ, եթե բավարարում են ճանաչման հետևյալ սկզբունքներին.

- հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն, և

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>6/37</i> |

- միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.3.17. Հիմնական միջոցների սկզբնական ճանաչմանը հաջորդող չափումների ժամանակ կիրառվում են երկու մոդել՝ սկզբնական արժեքի/ինքնարժեքի մոդել և վերագնահատման մոդել:

3.3.20.1. *Սկզբնական արժեքի/ինքնարժեքի մոդելի դեպքում* հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Այս մոտեցումը կիրառվում է այն հիմնական միջոցների նկատմամբ, որոնց իրական արժեքն օգտակար ծառայության ընթացքում էականորեն չի շեղվում հաշվեկշռային արժեքից: Սովորաբար այդպիսի հիմնական միջոցներն ունենում են փոքր օգտակար ծառայություն: Օրինակ՝ համակարգչային տեխնիկան, գրասենյակային սարքավորումները, գործիքները և այլն:

3.3.20.2. *Վերագնահատման մոդելի դեպքում*, հիմնական միջոցը չափվում է վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ այդ ակտիվի իրական արժեքը հանած հետագա կուտակված ամորտիզացիայի և արժեզրկումից կորուստների գումարները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, այնպես, որ հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

3.3.20.3. Վերագնահատման մոդելի կիրառման դեպքում հիմնական միջոցների վերագնահատումը կատարվում է առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Հիմնական միջոցների այդ դասի իրական արժեքների էական և անկանոն փոփոխության դեպքում Բանկի Գործադիր տնօրենի հրամանով տվյալ դասի գծով կարող է կատարվել վերագնահատում այլ պարբերականությամբ:

3.3.20.4. Իրական արժեքն այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել իրագել և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ընթացքում:

3.3.20.5. Վերագնահատման մոդելը Բանկն ընտրում է միայն շենք-շինությունների համար, իսկ մյուս հիմնական միջոցների համար հաշվառումն իրականացվում է համաձայն սկզբնական արժեքի/ինքնարժեքի մոդելի:

3.3.21. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը հաշվարկվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում գծային մեթոդով:

3.3.22. Բանկը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների գծով ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար սահմանում է դրանց օգտակար ծառայության ներքոհիշյալ ժամկետները, հետևաբար և կատարում է մաշվող ակտիվի մաշվածության գումարի պարբերական բաշխում այդ ընթացքում՝

- շենքերի, շինությունների համար՝ քսան տարի.
- հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար՝ մեկ տարի.
- այլ հիմնական միջոցների համար՝ հինգ տարի:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը հաստատվում է Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ դրանց հնարավոր օգտագործման ժամկետների վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրահանգման հիման վրա: Օգտագործման ժամկետի որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>7/37</i> |

Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը ամորտիզացվում են հինգ տարվա ընթացքում, եթե ավելի կարճ ժամկետ վարձակալության պայմանագրում չի նշված:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը հաշվարկվում է ինչպես շահագործվող, այնպես էլ շահագործման չհանձնված և շահագործումից ժամանակավորապես հանված ակտիվների համար:

3.3.23. Վերագնահատման արդյունքում առաջացած աճը հաշվեգրվում է չբաշխված շահույթին Բանկի կողմից ակտիվն օգտագործելու ընթացքում՝ մաշվածության հաշվարկմանը զուգընթաց: Այս դեպքում հաշվեգրվող գումարի մեծությունը որոշվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությամբ:

Վերագնահատման արդյունքում առաջացած աճի հաշվեգրումը չբաշխված շահույթին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի արտացոլվում:

3.3.24. Որոշելու համար՝ ոչ ընթացիկ ակտիվը արժեզրկվել է, թե ոչ, անհրաժեշտ է կիրառել ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի պահանջները: Եթե ոչ ընթացիկ ակտիվը հաշվառվում է փոխհատուցվող գումարից ավելի մեծ գումարով, այսինքն նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է այն գումարը, որն ակնկալվում է փոխհատուցել ակտիվի օգտագործման կամ վաճառքի միջոցով, ապա ակտիվը բնորոշվում է որպես արժեզրկված, և անհրաժեշտ է ճանաչել արժեզրկումից կորուստ:

Փոխհատուցվող գումարն ակտիվի վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է:

3.3.25. Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի և փոխհատուցվող գումարի տարբերության չափով Բանկը ճանաչում է որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են վերագնահատված արժեքով: Բանկը յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմված ֆինանսական դրության մասին հաշվետվությունում գնահատում է նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումներից կորուստները: Եթե ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքի և փոխհատուցվող գումարի տարբերությունը նվազել է, այսինքն՝ արժեզրկումից կորուստները նվազել են, ապա Բանկը նախկին արժեզրկումից կորստի և վերջին արժեզրկումից կորստի գումարների տարբերության չափով ճանաչում է եկամուտ:


3.3.26. Չվերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.3.27. Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է նվազեցվի մինչև դրա փոխհատուցվող գումարը միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

3.3.28. Արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչվի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը, համաձայն մեկ այլ ստանդարտի, հաշվառվում է վերագնահատված գումարով (օրինակ՝ համաձայն ՀՀՄՍ 16-ի վերագնահատման մոդելի): Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ պետք է դիտվի որպես վերագնահատումից արժեքի նվազում՝ համաձայն այդ ստանդարտի:

3.3.29. Վերագնահատված ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է այլ համապարփակ շահույթում կամ վնասում այնքանով, որքանով արժեզրկումից կորուստը չի գերազանցում այդ նույն ակտիվի վերագնահատումից արժեքի աճը: Վերագնահատված ակտիվի գծով այդպիսի արժեզրկումից կորուստը նվազեցնում է այդ ակտիվի վերագնահատումից առաջացած արժեքը:

3.3.30. Բանկի կողմից ձեռք բերված նյութական և ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքն ընդգրկում է՝

| | | | | |
|---|--|---------------------------------------|----------------------------------|-------------|
|  | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ</i> <i>21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն</i> <i>3</i> | <i>8/37</i> |

- գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային գեղչերը և արտոնությունները.
- ակտիվը համապատասխան վայր հասցեելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում.
- հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը, որոնց գծով Բանկի պարտականությունը առաջանում է կա՛ն միավորի ձեռքբերման ժամանակ, կա՛ն միավորները որոշակի ժամանակաշրջանում օգտագործման հետևանքով, որի նպատակը տարբեր է, քան այդ ժամանակաշրջանի ընթացքում պաշարների արտադրությունը:

3.3.31. Ուղղակիորեն վերագրելի ծախսումների օրինակներ են՝

- աշխատակիցների հատուցումների գծով ծախսումները (ինչպես սահմանված է ՀՀՍՍ 19 «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտով), որոնք առաջանում են ուղղակիորեն հիմնական միջոցի կառուցման կամ ձեռքբերման արդյունքում.
- տեղանքի նախապատրաստման ծախսումները.
- տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման սկզբնական ծախսումները.
- տեղակայման և հավաքման ծախսումները.
- ակտիվի անխափան աշխատանքի տեստավորման ծախսումները՝ հանած ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում արտադրված միավորների վաճառքից ստացված գուտ հասույթը (օրինակ՝ սարքավորումը տեստավորելու ընթացքում արտադրված նմուշները).
- մասնագետների վարձատրությունը:

3.3.32. Հիմնական միջոցների միավորը պետք է հանվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, երբ այն իրացվում (օտարվում) կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից (լուծարվում է), և ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում նրա իրացումից: Հիմնական միջոցների միավորի դուրս գրումից կամ իրացումից առաջացած արդյունքը պետք է որոշվի որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի (հասույթի) և հաշվեկշռային արժեքի տարբերություն և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ճանաչվի որպես եկամուտ կամ ծախս:

3.3.33. Մինչև յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտը Բանկը պարտավոր է կատարել հիմնական միջոցների գույքագրում: Գույքագրումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված և ՀՀ Կառավարության լիազոր մարմնի հետ համաձայնեցված կարգով և Բանկի կողմից մշակված ներքին կանոնակարգով և ուղեցույցներով: Հիմնական միջոցների գույքագրման ընթացքում հայտնաբերված ավելցուկը և պակասորդը արձանագրվում է գույքագրման ակտով, իսկ այդ ակտի հիման վրա հաշվապահական ձևակերպումները տրվում են միայն գույքագրման ակտը Գործադիր տնօրենի կողմից հաստատված լինելու դեպքում:

3.4. Պաշարներ

3.4.1. Պաշարների հաշվառումը Բանկում իրականացվում է համաձայն ՀՀՍՍ 2-ի:

Դրանք այն ակտիվներն են, որոնք.

- պահվում են սովորական (ամենօրյա) գործունեության ընթացքում վաճառքի կամ օգտագործման համար,
- վաճառքի համար պատրաստման ընթացքում են,

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|-------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>9/37</i> |

- արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար:

3.4.2. Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ համաձայն համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները:

3.4.3. Պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

3.4.4. Պաշարների ինքնարժեքը պետք է ներառի ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

3.4.5. Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են Բանկին հետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

3.4.6. Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն չափով, որ չափով դրանք կատարվել են՝ պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար: Օրինակ՝ կարող է տեղին լինել առանձին գնորդների համար կատարված ոչ արտադրական վերադիր ծախսումները կամ արտադրանքների նախագծման ծախսումները ներառել տվյալ պաշարի ինքնարժեքի մեջ:

3.4.7. Արագամաշ առարկաների արժեքը դուրս է գրվում ծախսումների համապատասխան հաշիվներին շահագործման հանձնելու կամ բաց թողնելու պահին 100 տոկոսով անկախ արժեքից:

3.4.8. Պաշարների ինքնարժեքի որոշման ժամանակ Բանկը ընդունում և կիրառում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը:

3.4.9. ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը ենթադրում է, որ պաշարների միավորները, որոնք գնվել են առաջինը, ելքագրվում են առաջինը և, հետևաբար միավորները, որոնք մնում են պաշարներում հաշվետու ժամանակաշրջանի վերջում, վերջին գնվածներն են:

3.4.10. Բանկը պաշարների հաշվառումն իրականացնում է համակարգչային ծրագրի միջոցով:

3.5. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

3.5.1. Բանկում արտարժույթի փոխանակման փոխարժեքի հետևանքները ճանաչվում են համաձայն ՀՀՄՍ 21 ստանդարտի: Այն կիրառվում է

- արտարժույթով գործառնությունները և մնացորդները հաշվառելիս, բացառությամբ ածանցյալ գործիքներով իրականացվող գործառնությունների ու դրանց գծով մնացորդների, որոնք ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի գործողության ոլորտում են.
- արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական արդյունքները և ֆինանսական վիճակը վերահաշվարկելիս, որոնք ներառվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ համախմբման, համամասնական համախմբման կամ բաժնեմասնակցության մեթոդով. և
- կազմակերպության արդյունքները և ֆինանսական վիճակը ներկայացման արժույթով վերահաշվարկելիս:

3.5.2. Ստորև ներկայացվում են մի շարք սահմանումներ՝ կապված սույն Քաղաքականության 3.5 կետի դրույթների հետ:

- Փակման փոխարժեք. սփոթ փոխանակման փոխարժեքն է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>10/37</i> |

- Փոխարժեքային տարբերություն. տարբերություն է, որն առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը տարբեր փոխանակման փոխարժեքներով վերահաշվարկելու արդյունքում:
- Փոխանակման փոխարժեք. երկու արժույթների փոխանակման հարաբերակցությունն է:
- Մփոթ փոխանակման փոխարժեք. անհապաղ փոխանակման համար մատչելի փոխանակման փոխարժեք:
- Արտարժույթ. արժույթ է, որը տարբերվում է կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից:
- Արտերկրյա ստորաբաժանում. հաշվետու կազմակերպության վերահսկվող կազմակերպությունը, ասոցիացված կազմակերպությունը, համատեղ ձեռնարկումը կամ մասնաճյուղն է, որոնց գործունեությունը տեղակայված է հաշվետու կազմակերպության երկրից դուրս կամ ծավալվում է այլ արժույթով:
- Ֆունկցիոնալ արժույթ. այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը իրականացնում է գործունեություն:
- Դրամային հոդվածներ. առկա արժույթի միավորներ, ինչպես նաև ակտիվներ և պարտավորություններ, որոնց դիմաց պետք է ստացվեն կամ վճարվեն ֆիքսված կամ որոշելի գումարով արժույթ:
- Չուտ ներդրումներ արտերկրյա ստորաբաժանումում. հաշվետու կազմակերպության մասնակցությունն է այդ արտերկրյա ստորաբաժանման գուտ ակտիվներում:
- Ներկայացման արժույթ. արժույթ է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են:

3.5.3. Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին պետք է գրանցվի ֆունկցիոնալ արժույթով, արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով հաշվետվական արժույթի և արտարժույթի միջև գործարքի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը: Բանկը, որպես փոխանակման փոխարժեք՝ արտարժույթով գործարքների ճանաչման ժամանակ հիմք է ընդունում ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքը:

3.5.4. Հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

- արտարժույթով դրամային հոդվածները յուրաքանչյուր օր պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով տվյալ օրվա ֆինանսական շուկայում ձևավորված փակման փոխարժեքը:
- արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով:

3.5.5. Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Բանկի դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ այն փոխարժեքային տարբերությունների, որոնք նշված են սույն հոդվածի 3.5.6 և 3.5.7 ենթակետերում:

3.5.6. Դրամային հոդվածի հետ կապված փոխարժեքային տարբերությունները, որոնք ըստ էության կազմում են արտերկրյա միավորում հաշվետու կազմակերպության կատարած գուտ ներդրման մի մասը, վերջինիս ֆինանսական հաշվետվությունների մեջ պետք է դասակարգվեն որպես սեփական կապիտալ՝ մինչև գուտ ներդրման օտարումը (իրացումը): Դրանից հետո փոխարժեքային տարբերությունները պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս:

3.5.7. Արտերկրյա միավորում գուտ ներդրման հեջ հանդիսացող արտարժութային

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>11/37</i> |

պարտավորություններից առաջացող փոխարժեքային տարբերությունները Բանկի ֆինանսական հաշվետվություններում պետք է դասակարգվեն որպես սեփական կապիտալ, մինչև զուտ ներդրման օտարումը: Դրանից հետո փոխարժեքային տարբերությունները պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս:

3.5.8. Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները փոխարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

3.6. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

3.6.1. Պահուստների, պայմանական պարտավորությունների և պայմանական ակտիվների ճանաչման չափանիշները, չափման հիմունքները, միմյանցից տարբերակման սկզբունքները Բանկում վարվում են համաձայն ՀՀՍՍ 37-ի:

3.6.2. Պահուստը իրենից ներկայացնում է անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն:

3.6.3. Բանկը պահուստը ճանաչում է, երբ.

- ունի ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.
- պարտականության մարման նպատակով հավանական է տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք.
- պարտականությունը արժանահավատորեն հնարավոր է գնահատել:

Եթե նշված պայմանները չեն բավարարվում, ապա Բանկը պահուստ չի ձևավորում:

3.6.4. Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

3.6.5. Պահուստի չափման ժամանակ օգտագործվում են հետևյալ մոտեցումները.

- պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար պետք է հաշվի առնվեն այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և պարագաներում.
- եթե ժամանակի մեջ դրամի արժեքի փոփոխության ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա (զեղչված) արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար.
- ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտավորությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, պետք է արտացոլված լինեն պահուստում, եթե բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալիս.
- ակտիվների ակնկալվող օտարումից շահույթները չպետք է հաշվի առնվեն պահուստը չափելիս:

3.6.6. Պահուստը մարելու համար անհրաժեշտ ծախսումները ամբողջությամբ կամ մասամբ կարող են փոխհատուցվել այլ անձանց կողմից (օրինակ՝ ապահովագրական պայմանագրերի, փոխհատուցման վերաբերյալ համաձայնությունների կամ մատակարարի երաշխիքների միջոցով): Նման փոխհատուցումները հաշվառվում են հետևյալ կերպ.

- փոխհատուցումը պետք է ճանաչվի այն դեպքում, երբ ըստ էության որոշակի է, որ Բանկի կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի.
- փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ.
- փոխհատուցման գծով ճանաչված գումարը չպետք է գերազանցի պահուստի գումարը:

3.6.7. Պահուստին վերաբերվող ծախսը համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կարող է ներկայացվել զուտ հիմունքով՝ հանելով փոխհատուցման գծով ճանաչված գումարը:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>12/37</i> |

3.6.8. Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

3.6.9. Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.6.10. Ստորև ներկայացվում են մի շարք սահմանումներ՝ կապված սույն Քաղաքականության 3.6 կետի դրույթների հետ:

3.6.11.1. Պարտավորություն. Բանկի ներկա պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի մարումը (կատարումը), ակնկալվում է, որ կհանգեցնի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի:

3.6.11.2. Պարտավորեցնող դեպք. դեպք, որը հանգեցնում է իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից (կատարումից) խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք Բանկը չունի:

3.6.11.3. Իրավական պարտականություն. պարտականություն, որը բխում է պայմանագրից, օրենսդրությունից և օրենքներից:

3.6.11.4. Կառուցողական պարտականություն. պարտականություն, որը բխում է Բանկի գործողություններից, որտեղ՝ անցյալի փորձով, հրապարակված քաղաքականությամբ կամ ընթացիկ հայտարարությամբ Բանկը ցույց է տալիս, որ ստանձնելու է որոշակի պարտավորություններ և կատարելու է նշված պարտավորությունները:

3.6.11.5. Պայմանական պարտավորություն՝

- հնարավոր պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Բանկի կողմից, կամ
- ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը, սակայն, չի ճանաչվում հետևյալ պատճառներով.
 - հավանական չէ, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, կամ
 - պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական պարտավորությունները պետք է ճանաչվեն արտահաշվեկշռում, այլ ոչ թե ֆինանսական դրության մասին հաշվետվությունում: Արտահաշվեկշռում հաշվառված պայմանական պարտավորությունները շարունակաբար պետք է գնահատվեն՝ որոշելու համար՝ արդյոք տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքը դարձել է հավանական, թե՛ ոչ: Եթե հավանական է դառնում, որ նախկինում որպես պայմանական պարտավորություն դիտվող հոդվածի գծով կպահանջվի ապագա տնտեսական օգուտների արտահոսք, ապա պահուստ ճանաչվում է այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ տեղի է ունեցել հավանականության փոփոխություն:

3.6.11.6. Պայմանական ակտիվ. հնարավոր ակտիվ՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Բանկի կողմից:

Պայմանական ակտիվները պետք է ճանաչվեն արտահաշվեկշռում, այլ ոչ թե ֆինանսական դրության մասին հաշվետվությունում: Պայմանական ակտիվները սովորաբար առաջանում են չպլանավորված կամ այլ չնախատեսված դեպքերից, որոնք առաջացնում են դեպի Բանկ տնտեսական օգուտների ներհոսքի հնարավորություն:

Արտահաշվեկշռում հաշվառված պայմանական ակտիվները շարունակաբար պետք է գնահատվեն՝ որոշելու համար, որ դրանց հետ կապված հանգամանքների զարգացումները

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>13/37</i> |

համարժեքորեն արտացոլված լինեն ֆինանսական հաշվետվություններում: Այն դեպքերում, երբ ըստ էության որոշակի է դարձել, որ տեղի կունենա տնտեսական օգուտների ներհոսք, ակտիվները և համապատասխան եկամուտները ճանաչվում է այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ տեղի է ունեցել հավանականության փոփոխություն:

3.6.12. Բանկը անձնակազմի գծով ստանձնած աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների, հարկային վճարների, մատակարարների հետ կնքված ծառայությունների մատուցման, ցպահանջ, ժամկետային ավանդների և վարկային պայմանագրերի վճարների գծով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ (եկեղծ գործառնության բնույթից՝ օրական կամ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ) հաշվեգրման սկզբունքով ձևավորել պարտավորություններ:

3.6.13. Պահուստները կարող են տարբերակվել այլ պարտավորություններից, ինչպիսիք են առևտրային կրեդիտորական պարտքերը և այլ հաշվեգրված պարտավորությունները, քանի որ պահուստների դեպքում առկա է մարման համար պահանջվող ապագա ծախսումների ժամկետների և գումարների անորոշություն:

3.6.14. Յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրերի դրությամբ դրանց հաջորդող աշխատանքային օրը պարբերաբար կատարվում է Բանկի կողմից կատարված դեբիտորական պարտքեր՝ կանխավճարներ բյուջեի, և կրեդիտորական պարտքեր՝ բյուջեի գծով հաշվեկշռային հաշիվների միջև ըստ արժույթների մնացորդների (առկայության դեպքում) հաշվանցում:

3.6.15. Բանկի կողմից աշխատակիցների հանդեպ ստանձնած պարտքային պարտավորությունների հաշվառման համար Բանկը ըստ հոդվածների ստեղծում է առանձին-առանձին պահուստներ:

3.6.16. Աշխատողների արձակուրդների գալիք վճարման գծով պարտավորությունը ձևավորվում է ամենամսյա հատկացումներ կատարելու միջոցով՝ ներառելով շրջանառության ծախսերի մեջ:

3.6.17. Տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ, կատարվում է աշխատողների արձակուրդների գալիք վճարման պահուստի հաջորդ տարի տեղափոխվող մնացորդի վերահաշվարկ: Հաշվարկված պահուստի մնացորդի և առկա մնացորդի տարբերության գումարի չափով պակասեցվում կամ ավելացվում է արձակուրդների գալիք վճարման պահուստի առկա մնացորդը՝ թղթակցելով շրջանառության ծախսերի հաշվառման հաշվապահական հաշիվների հետ:

3.6.18. Պահուստների, պայմանական ակտիվների և պայմանական պարտավորությունների ճանաչման, չափման, գնահատման, օգտագործման, ռիսկերի և անորոշությունների վերաբերյալ մնացած դրույթները կարգավորվում են համապատասխան ՀՀՄՍ-ով և այլ իրավական ակտերով:

3.7. Հասույթ

3.7.1. Բանկի կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք եկամուտները Բանկը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ և ՀՀՄՍ 18 սահմանված կարգով:

3.8. Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը

3.8.1. Ֆինանսական գործիքը պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

3.8.2. Ֆինանսական ակտիվը՝

- դրամական միջոց է.
- այլ կազմակերպության բաժնային գործիք է.
- պայմանագրային իրավունք է՝

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>14/37</i> |

- այլ կազմակերպությունից դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու, կամ
- այլ կազմակերպության հետ, իր համար պոտենցիալ նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու. կամ
- պայմանագիր է, որը մարվելու է կամ կարող է մարվել կազմակերպության սեփական բաժնային գործիքներով և հանդիսանում է՝
 - ոչ ածանցյալ գործիք, որի գծով կազմակերպությունը պարտավոր է կամ կարող է պարտավորվել ստանալու փոփոխական քանակությամբ իր իսկ բաժնային գործիքներ. կամ
 - ածանցյալ գործիք, որը մարվելու է կամ կարող է մարվել այլ կերպ, քան ֆիքսված գումարի դրամական միջոցը կամ այլ ֆինանսական ակտիվ ֆիքսված քանակությամբ կազմակերպության սեփական բաժնային գործիքների հետ փոխանակելով: Այս նպատակի համար կազմակերպության բաժնային գործիքները չեն ներառում վերադարձելի ֆինանսական գործիքները, որոնք դասակարգվել են որպես բաժնային գործիքներ՝ ՀՀՄՍ 39 ստանդարտի 16Ա և 16Բ պարագրաֆներին համապատասխան, այն գործիքները, որոնք կազմակերպության վրա պարտականություն են դնում՝ այլ կողմին տրամադրելու իր գուտ ակտիվների համամասնական բաժինը միայն լուծարման ժամանակ, և դասակարգվում են որպես բաժնային գործիքներ՝ 16Գ և 16Դ պարագրաֆներին համապատասխան, կամ այն գործիքները, որոնք հանդիսանում են կազմակերպության սեփական բաժնային գործիքների ապագա ստացման կամ տրամադրման պայմանագրեր:

3.8.3. Ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո չափման նպատակով ՀՀՄՍ 39 ստանդարտը ֆինանսական ակտիվները դասակարգում է հետևյալ չորս կատեգորիաների՝

- ֆինանսական ակտիվներ, չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր.
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

ՀՀՄՍ 39 ստանդարտով սահմանված են ֆինանսական գործիքների չորս կատեգորիաների սահմանումները.

3.8.4. Ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով. ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

3.8.4.1. այն դասակարգված է որպես առևտրական նպատակներով պահվող: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե այն՝

- ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով.
- սկզբնական ճանաչման պահին որոշելիս, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ. կամ
- ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված և արդյունավետ հեջավորման գործիք).

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>15/37</i> |

3.8.4.2. սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից այն նախատեսվել է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Կազմակերպությունը կարող է օգտագործել այդպիսի նախատեսումը, քանի որ՝

- այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը (որը երբեմն կոչվում է «հաշվառման անհամապատասխանություն»), որը այլապես կառաջանար ակտիվները կամ պարտավորությունները տարբեր հիմունքներով չափելու կամ դրանց գծով օգուտները և վնասները տարբեր հիմունքներով ճանաչելու արդյունքում կամ
- ֆինանսական ակտիվների խումբը, ֆինանսական պարտավորությունների խումբը կամ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խումբը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով՝ ռիսկերի կառավարման կամ ներդրումային փաստաթղթավորված ռազմավարության համաձայն, և այդ խմբի վերաբերյալ ներքին տեղեկատվություն «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտում :

3.8.5. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ. ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը , բացառությամբ՝

- նրանց, որոնց Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.
- նրանց, որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի.
- նրանց, որոնք բավարարում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը:

3.8.5.1. Բանկը չպետք է որևէ ֆինանսական ակտիվ դասակարգի որպես մինչև մարումը պահվող, եթե ընթացիկ ֆինանսական տարվա կամ նախորդ երկու ֆինանսական տարիների ընթացքում Բանկը մինչև մարման ժամկետը լրանալը վաճառել կամ վերադասակարգել է մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նշանակալի մասը (նշանակալի՝ համեմատած մինչև մարումը պահվող ներդրումների ողջ գումարի հետ), բացառությամբ այնպիսի վաճառքի կամ վերադասակարգումների, որոնք՝

- տեղի են ունենում մարման ժամկետին կամ ֆինանսական ակտիվի հետգնման իրավունքի իրագործման ամսաթվին այնքան մոտ (օրինակ՝ մարման ժամկետից երեք ամիս կամ ավելի պակաս առաջ), որ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունները նշանակալի ազդեցություն չէին ունենա ֆինանսական ակտիվների իրական արժեքի վրա.
- տեղի են ունենում այն բանից հետո, երբ Բանկն արդեն ստացել է ֆինանսական ակտիվների ըստ էության ամբողջ սկզբնական հիմնական գումարը՝ սահմանված վճարումների ժամանակացույցի կամ վաղաժամկետ վճարումների միջոցով կամ
- վերագրելի են առանձին բացառիկ դեպքի, որը Բանկի հսկողությունից դուրս է, և որը չէր կարող խելամտորեն կանխատեսվել Բանկի կողմից:

3.8.6. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր. ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների՝

- որոնք Բանկը մտադիր է անմիջապես կամ մոտ ապագայում վաճառել, որոնք պետք է դասակարգվեն որպես առևտրական նպատակներով պահվող, և նրանց, որոնց Բանկը սկզբնական

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>16/37</i> |

ճանաչման ժամանակ նախատեսել է որպես չափվող իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով.

- որոնք Բանկը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսել է որպես վաճառքի համար մատչելի. կամ
- որոնց գծով տիրապետողը կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան պարտքային դիրքի վատթարացումը, որի դեպքում ակտիվները պետք է դասակարգվեն որպես վաճառքի համար մատչելի:

3.8.6.1. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր չներկայացնող ակտիվների խմբում ձեռք բերված մասնակցությունը (օրինակ` փոխադարձ ֆոնդերում կամ այլ նման ֆոնդերում մասնակցությունը), փոխառություն կամ դեբիտորական պարտք չէ:

3.8.6.2. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր.
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, կամ
- ֆինանսական ակտիվներ` չափվող իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով:

3.8.7. Ֆինանսական պարտավորությունը`

• պայմանագրային պարտականություն է`այլ կազմակերպությանը դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելու.

• կամ այլ կազմակերպության հետ, իր համար պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու կամ պայմանագիր է, որը մարվելու է կամ կարող է մարվել Բանկի սեփական բաժնային գործիքներով:

3.8.8. Որպես բացառություն` ֆինանսական պարտավորության սահմանմանը բավարարող գործիքը դասակարգվում է որպես բաժնային գործիք, եթե այն ունի բոլոր հատկանիշները և բավարարում է բոլոր պայմաններին, որոնք նշված են ՀՀՄՍ 32 ստանդարտի 16Ա և 16Բ կամ 16Գ և 16Դ պարագրաֆներում:

3.8.9. Բաժնային գործիքը պայմանագիր է, որը հավաստում է Բանկի` բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացած ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք:

3.8.10. Վերադարձնելի գործիքը ֆինանսական գործիք է, որն իր տիրապետողին իրավունք է տալիս գործիքը հետ վերադարձնելու թողարկողին դրամական միջոցի կամ այլ ֆինանսական ակտիվի դիմաց, կամ ինքնաբերաբար հետ է վերադարձվում թողարկողին ապագա մի անորոշ դեպք տեղի ունենալիս, կամ գործիքի տիրապետողի մահվան կամ դուրս գալու դեպքում:

3.8.11. Ածանցյալ գործիք. ֆինանսական գործիք կամ ՀՀՄՍ 39 ստանդարտի գործողության ոլորտում գտնվող այլ պայմանագիր` օժտված ստորև նշված բոլոր երեք հատկանիշներով`

- դրա արժեքը փոփոխվում է` ի պատասխան սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, պարտքային վարկանիշի կամ պարտքային ինդեքսի, կամ այլ փոփոխականի փոփոխությունների` պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին (երբեմն կոչվում են «հիմքում ընկած»).
- այն չի պահանջում սկզբնական գուտ ներդրում կամ պահանջում է ավելի փոքր սկզբնական գուտ ներդրում պայմանագրերի այլ տեսակների համեմատ, որոնք շուկայական գործոնների փոփոխություններին, ըստ ակնկալիքների, կհակազդեին նույնաման կերպով.
- նրա գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա ամսաթվին:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>17/37</i> |

3.8.12. Ածանցյալ գործիքներ են օրինակ՝ ֆյուչերսները և ֆորվարդները, սվոպային և օպցիոնային պայմանագրերը: Ածանցյալ գործիքը սովորաբար ունենում է պայմանական քանակ, որն արժույթի որոշակի գումար է, բաժնետոմսերի քանակ, քաշի կամ ծավալի միավորների կամ պայմանագրում նշված այլ միավորների քանակ: Սակայն ածանցյալ գործիքը չի պահանջում, որ դրա տիրապետողը կամ տրամադրողը պայմանագրի սկզբում ներդնի կամ ստանա այդ պայմանական քանակը: Կամ՝ ածանցյալ գործիքը կարող է պահանջել հաստատուն վճարում կամ մի գումարի վճարում, որը կարող է փոխվել (բայց ոչ հիմքում ընկածի փոփոխության համամասնությամբ) պայմանական քանակի հետ չկապված ապագա որևէ իրադարձության արդյունքում:

3.8.13. Ածանցյալ գործիքի բնորոշ հատկանիշներից է այն, որ այն ունի սկզբնական գուտ ներդրում, որն ավելի փոքր է, քան կպահանջվեր այլ տիպի պայմանագրերի համար, որոնք, ըստ ակնկալիքների, նմանատիպ կերպով կարձագանքեին շուկայական գործոնների փոփոխություններին: Օպցիոնային պայմանագիրը բավարարում է այդ սահմանմանը, քանի որ պարզավճարն ավելի փոքր է, քան ներդրումը, որը կպահանջվեր հիմքում ընկած այն ֆինանսական գործիքի ձեռքբերման համար, որի հետ կապված է օպցիոնը: Արժույթային սվոպը, որը պահանջում է հավասար իրական արժեքներով տարբեր արժույթների սկզբնական փոխանակում, բավարարում է սահմանմանը, քանի որ այն ունի զրոյական սկզբնական գուտ ներդրում:

3.8.14. Բանկի կողմից առևտրական նպատակով ձեռք բերված կամ վաճառքի համար մատչելի ՀՀ պետական և ՀՀ ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի իրական արժեքի ճշգրտումները՝ վերագնահատումները կատարվում են յուրաքանչյուր օր հետևյալ ձևով.

- իրականացվում է տոկոսների հաշվեգրումներ, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.
- կատարվում են ՀՀ ԿԲ կողմից տրված մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքների հիման վրա արժեթղթի գնի ճշտումներ.

3.8.15. Վաճառքի համար մատչելի ՀՀ պետական պարտատոմսերի վերագնահատման արդյունքները արտացոլվում են «Կապիտալի» բաժնի «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում:

3.8.16. Եթե վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, և առկա է անկողմնակալ վկայություն, որ ակտիվը արժեզրկված է, ապա այն կուտակված կորուստը, որը ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, պետք է վերադասակարգվի՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում, մույնիսկ եթե ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել:

3.8.17. Կուտակված արժեզրկումից կորստի գումարը, որը վերադասակարգվում է՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում, պետք է լինի ձեռքբերման արժեքի (հանած հիմնական գումարի ցանկացած մարում և ամորտիզացիա) և ընթացիկ իրական արժեքի միջև տարբերությունը՝ հանած նախկինում այդ ֆինանսական ակտիվի գծով շահույթում կամ վնասում ճանաչված ցանկացած արժեզրկումից կորուստ:

3.8.18. Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գործիքում ներդրման գծով՝ շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները չպետք է հակադարձվեն շահույթի կամ վնասի միջոցով:

3.8.19. Եթե հետագա ժամանակաշրջանում որպես վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքի իրական արժեքը աճում է, և աճը կարելի է անկողմնակալ ձևով կապել մի դեպքի հետ, որը տեղի է ունեցել շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորստի ճանաչելուց հետո, ապա արժեզրկումից կորուստը պետք է հակադարձվի, իսկ հակադարձման գումարը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>18/37</i> |

3.8.20. Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Բանկը ֆինանսական ակտիվների գնումը և վաճառքը ճանաչում է հաշվեկշռում՝ կիրառելով ըստ վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառման մեթոդը:

3.8.21. Բանկի կողմից ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը պետք է ապաճանաչի (հաշվեկշռից դուրս գրի) այն և միայն այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը. կամ
- փոխանցում է ֆինանսական ակտիվը և փոխանցումը որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Բանկը փոխանցում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ այն՝

- փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ
- պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է ՀՀՄՍ 39-ի 19-րդ պարագրաֆի պայմաններին:

3.8.21.1. Երբ Բանկը փոխանցում է ֆինանսական ակտիվը, այն պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները:

3.8.21.2. Եթե Բանկը փոխանցում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա Բանկը պետք է ապաճանաչի ֆինանսական ակտիվը և փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականությունն ճանաչի առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ:


3.8.21.3. Եթե Բանկը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա Բանկը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը.

3.8.21.4. Եթե Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա Բանկը պետք է որոշի՝ արդյոք այն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Այս դեպքում՝

- եթե Բանկը չի պահպանել վերահսկողությունը, այն պետք է ապաճանաչի ֆինանսական ակտիվը և փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականություն ճանաչի առանձին որպես ակտիվներ կամ պարտավորություններ.
- եթե Բանկը պահպանել է վերահսկողությունը, այն պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ:

3.8.22. Բանկի կողմից ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի ապաճանաչման (ֆինանսական դրության մասին հաշվետվությունից դուրս գրելու) համար կիրառվում են հետևյալ սկզբունքները.

3.8.22.1. Բանկը պետք է ֆինանսական դրության մասին հաշվետվությունից դուրս գրի ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտավորությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը, եթե բավարարում է հետևյալ պայմաններին.

| | | | | |
|---|--|---------------------------------------|----------------------------------|--------------|
|  | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ</i> <i>21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն</i> <i>3</i> | <i>19/37</i> |

- պարտապանը պարտավորությունը կատարում է Բանկին վճարելու միջոցով՝ սովորաբար դրամական միջոցներով, այլ ֆինանսական ակտիվներով, սպրանքներով կամ ծառայություններով, կամ
- պարտապանը դատական կարգով կամ Բանկի կողմից իրավաբանորեն ազատվել է պարտավորության (կամ դրա մի մասի) գծով սկզբնական պատասխանատվությունից (այն փաստը, որ պարտապանը կարող է երաշխավորություն տրամադրած լինել, պարտադիր չէ, որ նշանակի, թե այս պայմանը բավարարված չէ):

3.8.22.2. Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմանները էականորեն տարբերվում են միմյանցից, իրենից ներկայացնում են հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապահովմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը: Նմանապես, գոյություն ունեցող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխությունը (անկախ նրանից, թե դա կատարվել է պարտապանի ֆինանսական դժվարությունների կամ այլ պատճառներով) պետք է հաշվառվի որպես հին պարտքի մարում:

3.8.22.3. Մարված կամ այլ կողմին փոխանցված պարտավորության (կամ պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և դրա համար վճարված գումարի միջև տարբերությունը պետք է ճանաչվի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.8.23. Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին Բանկը պետք է այն չափի իր իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո Բանկը պետք է ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափի իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք այն կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- փոխառությունների և դեբիտորական պարտքեր, ինչպես սահմանված է ՀՀՍՍ 39 ստանդարտի 9-րդ պարագրաֆում, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, ինչպես սահմանված է ՀՀՍՍ 39 ստանդարտի 9-րդ պարագրաֆում, որոնք պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.
- բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև ածանցյալ գործիքներ, որոնք կապված են դրանց հետ և պետք է մարվեն այդպիսի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որոնք պետք է չափվեն սկզբնական արժեքով:

Բանկը սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների և իրենցից պարտավորություն ներկայացնող ածանցյալ գործիքների, չափում է ամորտիզացված արժեքով, այսինքն՝ այն գումարով, որով ֆինանսական պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և հանած արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով դուրս գրված ցանկացած գումար:

Բանկը առևտրային նպատակներով պահվող պարտավորությունները և իրենցից պարտավորություն ներկայացնող ածանցյալ գործիքները չափում է իրական արժեքով:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>20/37</i> |

3.8.24. *Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք.* գումար, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և հանած ցանկացած նվազեցում արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով (ուղղակիորեն կամ կարգավորող հաշիվների օգտագործման միջոցով):

3.8.25. *Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ.* ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը պետք է գնահատի դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամկետ վճարման), սակայն չպետք է հաշվի առնի ապագա պարտքային կորուստները: Այս հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր այն վճարները և «կետերը», որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում (ՀՀՄՍ 18 «Հասույթ» ստանդարտը), ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումները և բոլոր այլ պարգևավճարներ և գեղչեր: Ենթադրվում է, որ դրամական միջոցների հոսքերը և համանման ֆինանսական գործիքների խմբի ակնկալվող ժամկետը կարելի է արժանահավատորեն գնահատել: Այնուհանդերձ, այն հազվագյուտ դեպքերում, երբ հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել ֆինանսական գործիքի (ֆինանսական գործիքների խմբի) դրամական միջոցների հոսքերը կամ դրա ակնկալվող ժամկետը, Բանկը պետք է օգտագործի ֆինանսական գործիքի (ֆինանսական գործիքների խմբի) պայմանագրային դրամական միջոցների հոսքերը պայմանագրային ժամկետի ամբողջ ընթացքում:

3.8.26. *Սպաճանաչում.* Բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից նախկինում ճանաչված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության դուրս բերում:

3.8.27. *Կանոնավոր կերպով գնում կամ վաճառք.* ֆինանսական ակտիվի գնում կամ վաճառք այնպիսի պայմանագրի համաձայն, որի պայմանները պահանջում են ակտիվի մատակարարում՝ համապատասխան շուկայում գործող կարգավորմամբ կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

3.8.28. *Գործարքի հետ կապված ծախսումներ.* լրացուցիչ ծախսումներ, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումը այն ծախսումն է, որը Բանկը չէր կրի, եթե այն ձեռք չբերեր, չթողարկեր կամ չօտարեր ֆինանսական գործիքը:

3.8.29. Հեջավորում նշանակում է հեջավորման մեկ կամ ավելի գործիքների նախատեսում՝ այնպես, որ դրանց իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցի հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունը:

3.8.29.1. Հեջավորված հոդվածը իրենից ներկայացնում է ակտիվ, պարտավորություն, կայուն պարտավորվածություն, մեծապես հավանական կանխատեսված գործարք կամ գուտ ներդրում արտերկրյա ստորաբաժանման մեջ, որը Բանկին ենթարկում է իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների ռիսկի, և նախատեսվում է որպես հեջավորվող:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>21/37</i> |

3.8.29.2. Հեջավորման գործիք՝ նախատեսված ածանցյալ գործիք, մեկ այլ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն, որի իրական արժեքը կամ դրամական միջոցների հոսքերը ակնկալվում է, որ կփոխհատուցեն նախատեսված հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները:

3.8.29.3. Հեջի հաշվապահական հաշվառման ժամանակ հեջավորման գործիքի և համապատասխան հեջավորվող հոդվածի իրական արժեքների փոփոխությունների արդյունքները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում համաչափորեն ճանաչվում են գուտ շահույթ կամ վնաս:

3.8.30. Ֆինանսական գործիքների (այդ թվում վարկերի և դեբիտորական պարտքերի) արժեզրկումը չափվում է ՀՀՄՍ 39 պահանջներին համապատասխան:

3.8.31. Վարկերի (այդ թվում՝ նաև օվերդրաֆտ, ֆակտորինգ և այլն) և դեբիտորական պարտքերի գծով պայմանագրերի սպասարկման ընթացքում առաջացող տուժանքները ենթակա են արտացոլման ֆինանսական դրության մասին հաշվետվությունում՝ բացառապես պայմանագրերում սահմանված դրույթներին համապատասխան:

3.8.32. Ֆինանսական դրության մասին հաշվետվությունից ակտիվների դուրս գրելուց հետո ետհաշվեկշռում դրանք ենթակա են հաշվառման մինչև հինգ տարի ժամանակով: Նշված ժամանակաշրջանի ընթացքում չմարված ակտիվները ենթակա են ետհաշվեկշռից դուրս գրման:

3.8.33. Սույն քաղաքականության 3.8.32. կետում նշված կարգով ետհաշվեկշռից դուրս գրված ակտիվները ենթակա են հաշվառման տվյալ նպատակի համար բացված բանկի ներքին ետհաշվեկշռային հաշիվներում ևս հինգ տարի ժամանակով, որից հետո դրանք ենթակա են ետհաշվեկշռից ընդհանրապես դուրսգրման:

3.8.34. Բանկը՝

- չպետք է վերադասակարգի ածանցյալ գործիքը՝ հանելով չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կատեգորիայից, քանի դեռ այն պահվում է կամ թողարկված է.
- չպետք է վերադասակարգի ածանցյալ գործիքը՝ հանելով չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կատեգորիայից, եթե սկզբնական ճանաչման ժամանակ այն Բանկի կողմից նախատեսվել է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.
- կարող է, եթե ֆինանսական ակտիվը այլևս չի պահվում կարճ ժամանակամիջոցում այն վաճառելու կամ վերագնելու նպատակով (չնայած այն բանին, որ այդ ֆինանսական ակտիվը կարող է ձեռք բերված կամ ստանձնված լինել հիմնականում կարճ ժամանակամիջոցում այն վաճառելու կամ վերագնելու նպատակով), վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվը՝ հանելով չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կատեգորիայից, եթե բավարարվում են ՀՀՄՍ 39 ստանդարտի 50Բ կամ 50Դ պարագրաֆների պահանջները:

Բանկը չպետք է սկզբնական ճանաչումից հետո վերադասակարգի որևէ ֆինանսական ակտիվ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կատեգորիայի:

3.8.35. Եթե Բանկը վերադասակարգում է ֆինանսական ակտիվը՝ հանելով չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կատեգորիայից՝ համաձայն ՀՀՄՍ 39 ստանդարտի 50Բ պարագրաֆի, ապա ֆինանսական ակտիվը պետք է վերադասակարգվի վերադասակարգման ամսաթվի դրությամբ դրա իրական արժեքով: Շահույթում կամ վնասում արդեն ճանաչված ցանկացած օգուտ կամ վնաս չպետք է հակադարձվի: Ֆինանսական ակտիվի իրական արժեքը վերադասակարգման ամսաթվի դրությամբ դառնում է համապատասխանաբար դրա նոր սկզբնական արժեք կամ ամորտիզացված արժեք:

3.8.36. Եթե Բանկը վերադասակարգում է ֆինանսական ակտիվը՝ հանելով չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կատեգորիայից՝ համաձայն ՀՀՄՍ 39 ստանդարտի 50Դ պարագրաֆի, կամ հանելով վաճառքի համար մատչելի կատեգորիայից՝ համաձայն 50Ե պարագրաֆի, ապա այն

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|---------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>22/ 37</i> |

պետք է վերադասակարգի ֆինանսական ակտիվը վերադասակարգման ամսաթվի դրությամբ դրա իրական արժեքով: Ըստ ՀՀՍՍ 39 ստանդարտի 50Դ պարագրաֆի վերադասակարգված ֆինանսական ակտիվի դեպքում շահույթում կամ վնասում արդեն ճանաչված ցանկացած օգուտ կամ վնաս չպետք է հակադարձվի: Ֆինանսական ակտիվի իրական արժեքը վերադասակարգման ամսաթվի դրությամբ դառնում է համապատասխանաբար դրա նոր սկզբնական արժեքը կամ ամորտիզացված արժեքը: Ըստ ՀՀՍՍ 39 ստանդարտի 50Ե պարագրաֆի վերադասակարգված, այսինքն՝ վաճառքի համար մատչելի կատեգորիայից դուրս բերված ֆինանսական ակտիվի դեպքում, այդ ակտիվից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ համաձայն ՀՀՍՍ 39 ստանդարտի 55(բ) պարագրաֆի, պետք է հաշվառվի 54-րդ պարագրաֆի համաձայն:

3.8.37. Եթե մտադրության կամ կարողության փոփոխության արդյունքում այլևս նպատակահարմար չէ դասակարգել ներդրումը որպես մինչև մարման ժամկետը պահվող, այն պետք է վերադասակարգվի որպես վաճառքի համար մատչելի և վերաչափվի իրական արժեքով, և դրա հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի միջև տարբերությունը պետք է հաշվառվի՝ համաձայն ՀՀՍՍ 39 ստանդարտի 55(բ) պարագրաֆի:

3.8.38. Այն պահին, երբ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նշանակալի մասի վաճառքը կամ վերադասակարգումը չեն համապատասխանում ՀՀՍՍ 39 ստանդարտի 9-րդ պարագրաֆի պայմաններից որևէ մեկին, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների մնացած մասը պետք է վերադասակարգվի որպես վաճառքի համար մատչելի: Այդպիսի վերադասակարգման դեպքում դրանց հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի միջև տարբերությունը պետք է հաշվառվի ՀՀՍՍ 39 ստանդարտի 55(բ) պարագրաֆի համաձայն:

3.8.39. Եթե առաջանում է արժանահավատ չափման հնարավորություն որևէ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության համար, որի համար այդ հնարավորությունը նախկինում ամկա չէր, և պահանջվում է, որ այդ ակտիվը կամ պարտավորությունը չափվի իրական արժեքով, եթե գոյություն ունի վերջինիս արժանահավատ չափման հնարավորություն (տե՛ս ՀՀՍՍ 39 ստանդարտի 46(գ) և 47 պարագրաֆները), ապա ակտիվը կամ պարտավորությունը պետք է վերաչափվի իրական արժեքով, և դրա հաշվեկշռային արժեքի և իրական արժեքի միջև տարբերությունը պետք է հաշվառվի 55-րդ պարագրաֆի համաձայն:

3.8.40. Եթե, մտադրության կամ կարողության փոփոխության արդյունքում կամ այն հազվագյուտ հանգամանքներում, երբ իրական արժեքի արժանահավատ չափումն այլևս հնարավոր չէ (ՀՀՍՍ 39 ստանդարտի տե՛ս 46(գ) և 47 պարագրաֆները) կամ այն պատճառով, որ 9-րդ պարագրաֆում նշված «երկու նախորդող ֆինանսական տարիները» արդեն անցել են, ապա իրական արժեքով հաշվեկշռային արժեքը այդ պահի դրությամբ դառնում է համապատասխանաբար դրա նոր սկզբնական արժեքը կամ ամորտիզացված արժեքը: Ցանկացած օգուտ կամ վնաս, որը նախկինում ճանաչվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ համաձայն ՀՀՍՍ 39 ստանդարտի 55(բ) պարագրաֆի, պետք է հաշվառվի հետևյալ կերպ.

- ֆիքսված մարման ժամկետով ֆինանսական ակտիվի դեպքում օգուտը կամ վնասը պետք է ամորտիզացվի շահույթում կամ վնասում մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Նոր ամորտիզացված արժեքի և մարման գումարի միջև տարբերությունը նույնպես պետք է ամորտիզացվի ֆինանսական ակտիվի մնացած ժամկետի ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ պարզևավճարի կամ զեղչի ամորտիզացիային համանման: Եթե ֆինանսական ակտիվը հետագայում արժեզրկվում է, ապա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ցանկացած օգուտ կամ վնաս վերադասակարգվում է՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում՝ համաձայն ՀՀՍՍ 39 ստանդարտի 67-րդ պարագրաֆի.

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|---------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>23/ 37</i> |

• այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը չունի ֆիքսված մարման ժամկետ, օգուտը կամ վնասը պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում ֆինանսական ակտիվի վաճառքի կամ այլ կերպ օտարման ժամանակ: Եթե ֆինանսական ակտիվը հետագայում արժեզրկվում է, ապա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ցանկացած օգուտ կամ վնաս վերադասակարգվում են՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում՝ համաձայն ՀՀՍՍ 39 ստանդարտի 67-րդ պարագրաֆի:

3.9. Վարձակալություն

3.9.1. Վարձակալությունը համաձայնագիր է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետի ընթացքում վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը: Հաշվառումը Բանկում իրականացվում է համաձայն ՀՀՍՍ 17-ի:

3.9.2. Վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալը ֆինանսական վարձակալությունը պետք է ճանաչի որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը որոշվում է վարձակալության սկզբի դրությամբ: Նվազագույն վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ զեղչման դրույք է հանդիսանում վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այն հնարավոր է որոշել, իսկ եթե ոչ՝ ապա պետք է օգտագործվի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալի ցանկացած սկզբնավորման ուղղակի ծախսում ավելացվում է որպես ակտիվ ճանաչված գումարին:

3.9.3. Չեղյալ չհամարվող վարձակալության պարագայում վարձակալությունը կարող է չեղյալ համարվել միայն՝


- որոշ քիչ հավանական հանգամանքների ի հայտ գալու դեպքում.
- վարձատուի թույլտվությամբ.
- եթե վարձակալը նույն վարձատուի հետ նույն կամ համարժեք ակտիվի վարձակալության համար նոր պայմանագիր է կնքում. կամ
- վարձակալի կողմից լրացուցիչ այնպիսի գումարի վճարման դեպքում, որ վարձակալության սկզբում վարձակալության շարունակությունը խելամտորեն որոշակի է:

3.9.4. Վարձակալության սկիզբը վարձակալության համաձայնագրի ամսաթվից և կողմերի՝ վարձակալության հիմնական դրույթների կատարման պարտավորվածության ստանձնման ամսաթվից ամենավաղն է: Այդ ամսաթվին՝

- վարձակալությունը դասակարգվում է որպես կան գործառնական, կան ֆինանսական վարձակալություն.
- ֆինանսական վարձակալության դեպքում որոշվում են վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ճանաչվելիք գումարները:

3.9.5. Վարձակալության ժամկետի մեկնարկը այն ամսաթիվն է, որից սկսած վարձակալն իրավասու է իրագործել վարձակալված ակտիվն օգտագործելու իր իրավունքը: Դա վարձակալության սկզբնապես ճանաչման ամսաթիվն է (այսինքն՝ վարձակալությունից բխող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների կամ ծախսերի ճանաչումն է համապատասխան դեպքում):

3.9.6. Վարձակալության ժամկետը չեղյալ չհամարվող այն ժամանակաշրջանն է, որի համար վարձակալը տվյալ ակտիվը վարձակալելու պայմանագիր է կնքել, ինչպես նաև հետագա ժամկետներն են, որոնց ընթացքում վարձակալը հնարավորություն ունի շարունակելու ակտիվի վարձակալությունը՝ հետագա վճարումով կամ առանց դրա, եթե վարձակալության սկզբում կարելի է խելամտորեն եզրակացնել, որ վարձակալը կիրագործի վերը նշված հնարավորությունը:

| | | | | |
|---|--|---------------------------------------|----------------------------------|---------------|
|  | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ</i> <i>21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն</i> <i>3</i> | <i>24/ 37</i> |

3.9.7. Նվազագույն վարձավճարները այն վճարներն են, որոնք վարձակալության ժամկետի ընթացքում պահանջվում կամ կարող են պահանջվել վարձակալից՝ առանց պայմանական ռենտաների, ծառայությունների արժեքի և հարկերի, որոնք պետք է վճարվեն վարձատուի կողմից և փոխհատուցվեն նրան, ինչպես նաև՝

- վարձակալի դեպքում՝ վարձակալի կամ նրա հետ կապակցված կողմի երաշխավորած ցանկացած գումար, կամ
- վարձատուի դեպքում՝ ստորև թվարկվածների կողմից վարձատուին երաշխավորված ցանկացած մնացորդային արժեք՝
 - վարձակալ.
 - վարձակալի հետ կապակցված կողմ. կամ
 - վարձատուի հետ չկապակցված երրորդ կողմ, որը ֆինանսապես ի վիճակի է կատարել այդ երաշխավորության գծով պարտականությունները:

Այնուամենայնիվ, եթե վարձակալը հնարավորություն ունի տվյալ ակտիվը գնելու այն գնով, որը սպասվում է, որ բավականաչափ ցածր կլինի այդ հնարավորությունն իրագործելու ամսաթվի իրական արժեքից, և եթե վարձակալության սկզբում արդեն կա խելամիտ համոզվածություն, որ այդ հնարավորությունը կիրագործվի, ապա նվազագույն վարձավճարները ներառում են վարձակալության ժամկետի ընթացքում՝ մինչև այդ գնման հնարավորությունը իրագործելու սպասվող ամսաթիվը, վճարման ենթակա նվազագույն վճարները, ինչպես նաև գնման այդ հնարավորությունն իրագործելու համար պահանջվող վճարը:

3.9.8. Տնտեսական ծառայությունը.

- այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ակնկալվում է ակտիվի տնտեսապես օգտագործելիությունը մեկ կամ ավելի օգտագործողների կողմից կամ
- արտադրանքի կամ նմանատիպ հողվածների այն քանակն է, որը ակտիվից ակնկալվում են ստանալ մեկ կամ ավելի օգտագործողներ:

3.9.9. Օգտակար ծառայությունը այն գնահատված մնացորդային ժամանակահատվածն է՝ վարձակալության ժամկետի մեկնարկից սկսած և վարձակալության ժամկետով չսահմանափակված, որի ընթացքում ակնկալվում է ակտիվում մարմնավորված տնտեսական օգուտների սպառումը կազմակերպության կողմից:

3.9.10. Երաշխավորված մնացորդային արժեք.

- վարձակալի դեպքում՝ մնացորդային արժեքի այն մասն է, որը երաշխավորված է վարձակալի կամ նրա հետ կապակցված անձի կողմից (երաշխավորության գումարը այն առավելագույն գումարն է, որը ցանկացած դեպքում կարող է դառնալ վճարման ենթակա).
- վարձատուի դեպքում՝ մնացորդային արժեքի այն մասն է, որը երաշխավորված է վարձատուի հետ չկապակցված երրորդ անձի կողմից, որը ֆինանսապես ի վիճակի է կատարել երաշխավորության գծով պարտավորությունները:

3.9.11. Չերաշխավորված մնացորդային արժեքը վարձակալված ակտիվի մնացորդային արժեքի այն մասն է, որի իրացումը վարձատուի կողմից ապահովված չէ կամ երաշխավորված է միայն վարձատուի հետ կապակցված անձի կողմից:

3.9.12. Սկզբնավորման ուղղակի ծախսումները լրացուցիչ ծախսումներ են, որոնք ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը, բացառությամբ արտադրող կամ դիլեր վարձատուների կողմից կատարված այդպիսի ծախսումների:

3.9.13. Վարձակալությունում համախառն ներդրումները հետևյալի հանրագումարն է՝

- ֆինանսական վարձակալության դեպքում վարձատուի կողմից ստացման ենթակա նվազագույն վարձավճարներ.

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>25/37</i> |

- վարձատուին հասանելիք ցանկացած չերաշխավորված մնացորդային արժեք:
- 3.9.14. Վարձակալությունում զուտ ներդրումները վարձակալությունում համախառն ներդրումներն են՝ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով զեղչված:
- 3.9.15. Չվաստակած ֆինանսական եկամուտը հետևյալ երկու մեծությունների տարբերությունն է՝
 - վարձակալությունում համախառն ներդրումների և
 - վարձակալությունում զուտ ներդրումների:
- 3.9.16. Վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը զեղչման այն դրույքն է, որը վարձակալության սկզբի դրությամբ հանգեցնում է նրան, որ նվազագույն վարձավճարների և չերաշխավորված մնացորդային արժեքի հանրագումարի ներկա արժեքը հավասար լինի՝ վարձակալված ակտիվի իրական արժեքի և վարձատուի սկզբնավորման ուղղակի ծախսումների հանրագումարին:
- 3.9.17. Վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը վարձակալը ստիպված կլինեք վճարել համանման վարձակալության դիմաց կամ, եթե դա որոշելի չէ, այն դրույքն է, որով վարձակալության սկզբում վարձակալը կներգրավեր համանման ժամկետով և համանման ապահովությամբ փոխառու միջոցներ՝ տվյալ ակտիվի գնման նպատակով:
- 3.9.18. Պայմանական ռենտան վարձավճարների այն մասն է, որը որոշակի գումարով չի ֆիքսվում, այլ հիմնված է ապագա գործոնի մեծության վրա, որի փոփոխությունը կապված չէ ժամանակի անցման գործոնի հետ (օրինակ՝ ապագա վաճառքից տոկոս, ապագա օգտագործման ծավալ, ապագա գների ինդեքսներ, ապագա շուկայական տոկոսադրույքներ):
- 3.9.19. Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե վարձակալին են փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:
- 3.9.20. Նվազագույն վարձավճարները պետք է բաշխվեն ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակաշրջանների պետք է բաշխվի այնպես, որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Պայմանական ռենտաները պետք է ճանաչվեն որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվում են:
- 3.9.21. Ֆինանսական վարձակալությունն առաջացնում է մաշվածության (ամորտիզացիայի) ծախս (ծախսում)՝ մաշվող (ամորտիզացվող) ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական ծախսեր՝ յուրաքանչյուր հաշվառման ժամանակաշրջանի համար: Վարձակալված մաշվող (ամորտիզացվող) ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությունը պետք է համապատասխանի սեփական ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությանը, իսկ ճանաչվող մաշվածության (ամորտիզացիայի) հաշվարկը պետք է կատարվի համաձայն ՀՀՍՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի և ՀՀՍՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի: Եթե չկա խելամիտ համոզվածություն, որ վարձակալը վարձակալության ժամկետի ավարտին ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին պետք է ամորտիզացվի հետևյալ երկու ժամկետներից առավել կարճի ընթացքում՝ վարձակալության ժամկետի կամ օգտակար ծառայության ժամկետի:
- 3.9.22. Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում պետք է ճանաչվեն որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով:
- 3.9.23. Գործառնական վարձակալության գծով վարձավճարները (բացառությամբ ծառայությունների ծախսումների, օրինակ՝ ապահովագրության և սպասարկման) ճանաչվում են որպես ծախս (ծախսում) գծային հիմունքով, բացառությամբ եթե մեկ այլ պարբերական հիմունք ավելի լավ է ներկայացնում

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>26/37</i> |

օգտագործողի օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը, նույնիսկ եթե վճարումները չեն կատարվում այդ հիմունքով:

3.9.24. Վարձատուն ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում գուտ ներդրումների մեծությամբ հավասար գումարով:

3.9.25. Ֆինանսական վարձակալության շրջանակներում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները վարձատուի կողմից փոխանցվում են, և այդպիսով վարձակալության դիմաց վարձավճարների գծով դեբիտորական պարտքերը վարձատուի կողմից դիմվում են որպես իր ներդրումների հիմնական գումարի մարում և ֆինանսական եկամուտ՝ որպես իր ներդրումների և ծառայությունների դիմաց հատույց:

3.9.26. Վարձատուի կողմից հաճախ կատարվում են սկզբնավորման ուղղակի ծախսումներ, ինչպիսիք են միջնորդական և իրավաբանական ծառայությունների դիմաց վճարները, ինչպես նաև ներքին ծախսումները, որոնք լրացուցիչ են և ուղղակիորեն վերագրելի են վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը: Այդ ծախսումներում չեն ներառվում ընդհանուր վերադիր ծախսումները, ինչպիսիք են վաճառքի և մարկետինգային խմբի ծախսումները: Ֆինանսական վարձակալության դեպքում, բացառությամբ նրանց, որոնք ներառում են արտադրող կամ դիլեր վարձատուներին, սկզբնավորման ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի սկզբնապես չափման մեջ և նվազեցնում են վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվող եկամտի գումարը: Վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը սահմանվում է այնպես, որ սկզբնավորման ուղղակի ծախսումները մեխանիկորեն ներառվում են ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքում, և անհրաժեշտություն չկա դրանք ավելացնել առանձին: Վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի՝ արտադրող կամ դիլեր վարձատուների կողմից կատարված ծախսումները բացառվում են սկզբնավորման ուղղակի ծախսումների սահմանումից: Արդյունքում, դրանք բացառվում են վարձակալությունում գուտ ներդրումից և ճանաչվում են որպես ծախս վաճառքի գծով շահույթի ճանաչման պահին, որը ֆինանսական վարձակալության դեպքում սովորաբար վարձակալության ժամկետի մեկնարկն է:

3.9.27. Ֆինանսական եկամտի ճանաչումը պետք է հիմնված լինի մի գրաֆիկի վրա, որը կապահովի հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի գուտ ներդրումների նկատմամբ:

3.9.28. Վարձատուի նպատակն է վարձակալության ժամկետի ընթացքում ֆինանսական եկամուտը բաշխել պարբերական և խելամիտ հիմունքով: Եկամտի այդպիսի բաշխումը հիմնվում է ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի գուտ ներդրումների հաստատուն պարբերական հատույցն արտացոլող գրաֆիկի վրա: Ժամանակաշրջանին վերաբերող վարձավճարները, բացառությամբ ծառայություններին վերաբերող ծախսումների, հանվում են վարձակալությունում համախառն ներդրումներից՝ կրճատելու համար թե՛ ներդրումների հիմնական գումարը, և թե՛ չվաստակած ֆինանսական եկամուտը:

3.9.29. Գնահատված չերաշխավորված մնացորդային արժեքները, որոնք հաշվի են առնվել վարձակալությունում վարձատուի համախառն ներդրումները հաշվարկելիս, պարբերաբար վերանայվում են: Եթե գնահատված չերաշխավորված մնացորդային արժեքը նվազել է, ապա վարձակալության ժամկետում եկամտի բաշխումը վերանայվում է, իսկ հաշվեգրված գումարների նվազումը ճանաչվում է անմիջապես:

3.9.30. Գործառնական վարձակալության հանձնված ակտիվները վարձատուն պետք է արտացոլի իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ ըստ ակտիվի բնույթի:

3.9.31. Գործառնական վարձակալությունից ստացված եկամուտը պետք է ճանաչվի գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>27/37</i> |

3.9.32. Վարձակալական եկամուտը վաստակելիս կրած ծախսումները, ներառյալ մաշվածությունը, ճանաչվում են որպես ծախս: Վարձակալական եկամուտը (բացառությամբ մատուցված ծառայություններից ստացված եկամուտը, օրինակ՝ սպահովագրությունից և սպասարկումից) վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է գծային հիմունքով, նույնիսկ երբ գումարներն այդ հիմունքով չեն ստացվում, բացառությամբ եթե մեկ այլ պարբերական հիմունք ավելի լավ է ներկայացնում վարձակալության տրված ակտիվից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

3.9.33. Գործառնական վարձակալության շուրջ բանակցելիս և համաձայնություն ձեռք բերելիս, վարձատուի կողմից կատարած սկզբնավորման ուղղակի ծախսումները պետք է ավելացվեն վարձակալության տրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվեն որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս:

3.9.34. Վարձակալության տրված մաշվող (ամորտիզացվող) ակտիվների մաշվածության հաշվարկը պետք է կատարվի այն հիմունքով, որը համապատասխանում է նմանատիպ ակտիվների համար վարձատուի կողմից կիրառվող մաշվածության հաշվարկման քաղաքականությանը, իսկ մաշվածության (ամորտիզացիայի) հաշվարկը պետք է կատարվի ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի համաձայն:

3.9.35. Որոշելու համար, թե արդյոք վարձակալության տրված ակտիվը արժեզրկվել է, կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 36-ը:

3.9.36. Վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքն իրենից ներկայացնում է ակտիվի վաճառք և նույն ակտիվի հետադարձ վարձակալություն: Վարձավճարները և վաճառքի գները սովորաբար փոխադարձ կախվածություն ունեն, քանի որ դրանք բանակցվում են որպես մեկ փաթեթ: Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի հաշվապահական մոտեցումը կախված է վարձակալության տեսակից:

3.9.37. Եթե վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքը հանգեցնում է ֆինանսական վարձակալության, ապա հաշվեկշռային արժեքի նկատմամբ վաճառքից հասույթի ցանկացած գերազանցում չպետք է անմիջապես ճանաչվի որպես եկամուտ վաճառող-վարձակալի կողմից: Փոխարենը, այն պետք է հետաձգվի և ամորտիզացվի վարձակալության ժամկետի ընթացքում:

3.9.38. Եթե հետադարձ վարձակալությունը ֆինանսական վարձակալություն է, ապա գործարքը վարձատուի կողմից վարձակալին ֆինանսավորում հատկացնելու միջոց է, որում ակտիվը հանդես է գալիս որպես երաշխիք: Այդ պատճառով հաշվեկշռային արժեքի նկատմամբ վաճառքից հասույթի գերազանցումը տեղին չէ դիտել որպես եկամուտ: Այդպիսի գերազանցումը հետաձգվում և ամորտիզացվում է վարձակալության ժամկետի ընթացքում:

3.9.39. Եթե վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքը հանգեցնում է գործառնական վարձակալության, և ակնհայտ է, որ գործառնությունը իրականացվել է իրական արժեքով, ապա ցանկացած շահույթ կամ վնաս անմիջապես պետք է ճանաչվի: Եթե վաճառքի գինն իրական արժեքից ցածր է, ապա ցանկացած շահույթ կամ վնաս պետք է անմիջապես ճանաչվի, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասները փոխհատուցվում են շուկայական գներից ցածր ապագա վարձավճարներով: Այս դեպքում այն պետք է հետաձգվի և ամորտիզացվի այն ժամանակաշրջանի վարձավճարներին համամասնորեն, որի ընթացքում ակնկալվում է ակտիվի օգտագործումը: Եթե վաճառքի գինն իրական արժեքից բարձր է, ապա իրական արժեքը գերազանցող մասը պետք է հետաձգվի և ամորտիզացվի այն ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է ակտիվի օգտագործումը:

3.10. Կապակցված կողմեր

3.10.1. Կապակցված կողմ. կողմը կապակցված է կազմակերպությանը, եթե՝

3.10.1.1. ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ մեկ կամ ավելի միջնորդների միջոցով, կողմը՝

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>28/37</i> |

- վերահսկում է կազմակերպությանը, վերահսկվում է նրա կողմից կամ նրա հետ միասին ընդհանուր վերահսկողության տակ է գտնվում (այստեղ ներառվում են մայր կազմակերպությունները, դուստր կազմակերպությունները և միևնույն մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպությունները).
- կազմակերպությունում ունի մասնակցություն, որն ապահովում է նշանակալի ազդեցության կազմակերպության նկատմամբ կամ
- համատեղ վերահսկողություն է իրականացնում տվյալ կազմակերպության նկատմամբ.

3.10.1.2. կողմը կազմակերպության համար ասոցիացված կազմակերպություն է (ինչպես սահմանված է «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում» ՀՀՄՍ 28-ում).

3.10.1.3. կողմը համատեղ ձեռնարկում է, որտեղ կազմակերպությունը ձեռնարկող է (տե՛ս «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում» ՀՀՄՍ 31-ը).

3.10.1.4. կողմը կազմակերպության կամ նրա մայր կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմի անդամ է.

3.10.1.5. կողմը 3.10.1.1 կամ 3.10.1.4 ենթակետերում նշված անձանց ընտանիքի մտերիմ անդամ է.

3.10.1.6. կողմը կազմակերպություն է, որը վերահսկվում է, համատեղ է վերահսկվում կամ նշանակալի ազդեցության է ենթարկվում (դ) կամ (ե) կետերում նշված անձանց կողմից, կամ այդպիսի կազմակերպությունում զգալի քանակությամբ ձայների իրավունքը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում է նշված անձանց. կամ

3.10.1.7. կողմը հետաշխատանքային հատուցումների պլան է՝ կազմակերպության կամ կազմակերպության համար կապակցված կողմ հանդիսացող կազմակերպությունների աշխատակիցներին հատուցումներ վճարելու համար:

3.10.2. ՀՀՄՍ 24-ի համատեքստում հետևյալ կողմերը չեն համարվում կապակցված.

- երկու կազմակերպությունները, զուտ այն պատճառով, որ ունեն ընդհանուր տնօրեն (բայց անհրաժեշտ է հաշվի առնել հնարավորությունը և գնահատել հավանականությունը, որ տնօրենը կարող է ազդել երկու կազմակերպությունների քաղաքականությունների վրա՝ նրանց գործնական հարաբերություններում),

- ֆինանսական միջոցներ տրամադրողները, արհմիությունները, հասարակական նշանակության կազմակերպությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, և այն կազմակերպությունները, որոնք իրենց սովորական՝ գործնական հարաբերությունների ընթացքում հարաբերվում են վերը նշվածների հետ (չնայած վերջիններս կարող են սահմանափակել կազմակերպության գործելու ազատությունը կամ մասնակցել նրա որոշումներ ընդունելու գործընթացին), և

- առանձին գնորդը, մատակարարը, ֆրանչիզ տրամադրող ընկերությունը, բաշխիչը (դիստրիբյուտոր) կամ գլխավոր գործակալը, որոնց հետ կազմակերպությունը զգալի ծավալի գործարքներ է իրականացնում, և պարզապես միայն այդ պատճառով է առաջանում տնտեսական կախվածություն:

3.10.3. Կապակցված կողմերի միջև յուրաքանչյուր հնարավոր փոխհարաբերություն դիտարկելիս պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն տվյալ փոխհարաբերության սույլ իրավական ձևին, այլև էությանը:

3.10.4. Կապակցված կողմերի միջև գործարքը ռեսուրսների կամ պարտավորությունների փոխանցում է կապակցված կողմերի միջև անկախ վճարի գանձումից: Այդպիսի գործարքների օրինակներ են՝

- ապրանքների, արտադրանքի (պատրաստի կամ անավարտ) գնում կամ վաճառք,
- այլ ակտիվների գնում կամ վաճառք.
- ծառայությունների մատուցում կամ ստացում,
- գործակալական համաձայնագրեր,

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>29/37</i> |

- վարձակալական համաձայնագրեր,
- հետազոտության և զարգացման աշխատանքների արդյունքների փոխանցում,
- լիցենզային համաձայնագրեր,
- ֆինանսներ (ներառյալ վարկերը և կանոնադրական կապիտալում ներդրումները դրամական կամ բնափրային տեսքով),
- երաշխիքներ, երաշխավորություններ և գրավներ,
- կառավարման պայմանագրեր:

3.10.5. Առանցքային կառավարչական անձնակազմը այն անձինք են, ովքեր իրավասու և պատասխանատու են՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, Բանկի գործունեության պլանավորման, ուղղորդման և վերահսկողության համար, ներառյալ Բանկի տնօրենները (գործադիր կամ այլ):

3.10.6. Նշանակալի ազդեցությունը Բանկի ֆինանսական և գործառնական քաղաքականության որոշումներին մասնակցելու կարողությունն է, բայց ոչ այդ քաղաքականությունների նկատմամբ վերահսկողությունը: Նշանակալի ազդեցություն կարող է ձեռք բերվել բաժնեմասնակցությամբ, կանոնադրությամբ կամ համաձայնագրով:

3.10.7. Մայր կազմակերպությունների և դուստր կազմակերպությունների միջև փոխհարաբերությունները պետք է բացահայտվեն՝ անկախ այդ կապակցված կողմերի միջև գործարքներ տեղի ունեցած լինելուց: Կազմակերպությունը պետք է բացահայտի տվյալ կազմակերպության մայր կազմակերպության անունը և վերջնական վերահսկող կողմի անունը, եթե դրանք նույնը չեն: Եթե ոչ այդ կազմակերպության մայր կազմակերպությունը, ոչ վերջնական վերահսկող կողմը չեն պատրաստում հանրության կողմից օգտագործման համար հասանելի ֆինանսական հաշվետվություններ, ապա պետք է նաև բացահայտվի հաջորդ ավելի ավագ մայր կազմակերպության անունը, որ ներկայացնում է այդպիսի ֆինանսական հաշվետվություններ:


3.10.8. Որպեսզի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները կարողանան կարծիք կազմել կապակցված կողմերի միջև փոխհարաբերությունների՝ կազմակերպության վրա ազդեցության մասին, նպատակահարմար է բացահայտել կապակցված կողմերի միջև փոխհարաբերությունները վերահսկողության առկայության դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե այդ կապակցված կողմերի միջև գործարքներ եղել են, թե ոչ:

3.10.9. Մայր և դուստր կազմակերպությունների միջև կապակցված կողմերի փոխհարաբերությունների նույնականացումն ու բացահայտումը կատարվում են ի լրումն ՀՀՍՍ 27-ով, ՀՀՍՍ 28-ով և ՀՀՍՍ 31-ով պահանջվող բացահայտումների, որոնց համաձայն պետք է թվարկվեն և նկարագրվեն դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում կատարված նշանակալի ներդրումները:

3.10.10. Բանկը պետք է բացահայտի առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումները՝ ամբողջը և հետևյալ կատեգորիաներից յուրաքանչյուրի համար առանձին՝

- աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ,
- հետաշխատանքային հատուցումներ,
- այլ երկարաժամկետ հատուցումներ,
- ազատման նպաստներ,
- բաժնետոմսի վրա հիմնված վճարումներ:

3.10.11. Եթե կապակցված կողմերի միջև եղել են գործարքներ, ապա Բանկը պետք է բացահայտի կապակցված կողմերի միջև փոխհարաբերությունների բնույթը, ինչպես նաև տեղեկատվություն գործարքների և չմարված մնացորդների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են՝ ֆինանսական հաշվետվությունների վրա այդ հարաբերությունների հնարավոր ազդեցությունը հասկանալու համար: Այս բացահայտումները պետք է կատարվեն ի լրումն 16-րդ պարագրաֆի պահանջների, որոնք

| | | | | |
|---|--|--------------------------------|---------------------------|--------------|
|  | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ</i> 21.12.2012թ. | <i>Խմբագրություն</i> 3 | <i>30/37</i> |

վերաբերում են առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումների բացահայտմանը: Բացահայտումները պետք է առնվազն ներառեն՝

- գործարքների գումարը.
- չմարված մնացորդների գումարը և՝
 - դրանց ժամկետներն ու պայմանները, ներառյալ դրանց ապահովված լինելը և մարման համար վճարվելիք հատուցման բնույթը.
 - ցանկացած ստացված կամ տրված երաշխիքի վերաբերյալ մանրամասներ.
- չմարված մնացորդների գումարի հետ կապված կասկածելի պարտքերի պահուստները.
- ժամանակաշրջանի ընթացքում ճանաչված ծախսերը կապակցված կողմերից ստացվելիք անհուսալի կամ կասկածելի պարտքերի գծով:

3.10.12. Սույն Քաղաքականության 3.10.15 ենթակետով պահանջվող բացահայտումները հետևյալ կատեգորիաներից յուրաքանչյուրի համար պետք է կատարվեն առանձին՝

- մայր կազմակերպություն.
- կազմակերպության նկատմամբ համատեղ վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություններ.
- դուստր կազմակերպություններ.
- ասոցիացված կազմակերպություններ.
- համատեղ ձեռնարկումներ, որտեղ կազմակերպությունը ձեռնարկող է.
- կազմակերպության կամ իր մայր կազմակերպության առանցքային կառավարչական անձնակազմը.
- այլ կապակցված կողմեր:

3.10.13. Այն փաստի բացահայտումը, որ կապակցված կողմերի միջև գործարքները կատարվել են այնպիսի պայմաններով, որոնք համարժեք են «պարզած ձեռքի հեռավորության» գործարքների ժամանակ գերակշռող պայմաններին, կատարվում է միայն այդ պայմանները հիմնավորելու հնարավորության դեպքում:

3.10.14. Նմանատիպ բնույթի հողվածները կարող են միասնաբար բացահայտվել, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին բացահայտումն անհրաժեշտ է՝ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա կապակցված կողմերի միջև գործարքների ազդեցությունը հասկանալու համար:


3.11. Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

3.11.1. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը Բանկը ճանաչում է համաձայն ՀՀՍՍ 33-ի. այն սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի և այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվի հարաբերությունն է:

3.11.2. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկման նպատակով սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթը կամ վնասը ընդունվում է հավասար այդ ժամանակաշրջանի գուտ շահույթին կամ վնասին՝ հանած արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները:

3.11.3. Հարկումից հետո արտոնյալ շահաբաժինների գումարը, որը հանվում է շահույթից կամ վնասից, իրենից ներկայացնում է՝

- տվյալ ժամանակաշրջանի համար ոչ կուտակային արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված ցանկացած արտոնյալ շահաբաժինների գումարը հարկումից հետո.

| | | | | |
|---|--|---------------------------------|----------------------------|--------------|
|  | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>31/37</i> |

• տվյալ ժամանակաշրջանի համար կուտակային արտոնյալ բաժնետոմսերի գծով պահանջվող արտոնյալ շահաբաժինների գումարը հարկումից հետո, անկախ այն բանից՝ շահաբաժիններ հայտարարվել են, թե ոչ: Տվյալ ժամանակաշրջանի համար արտոնյալ շահաբաժինների գումարը չի ներառում կուտակային արտոնյալ բաժնետոմսերի գծով ընթացիկ ժամանակաշրջանում վճարված կամ հայտարարված ցանկացած արտոնյալ շահաբաժինների գումարը, որը վերաբերում է նախորդ ժամանակաշրջաններին:

3.11.4. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկման նպատակով սովորական բաժնետոմսերի թիվը ընդունվում է հավասար տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին (այսինքն՝ տվյալ ժամանակաշրջանի սկզբում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թվին հանած և (կամ) գումարած այդ ժամանակաշրջանի ընթացքում համապատասխանաբար հետ գնված կամ թողարկված սովորական բաժնետոմսերի թիվը՝ բազմապատկված ժամանակային կշռող գործակցով):

3.11.5. Սովորական բաժնետոմսերի՝ վերը նշված հաշվարկի մեջ ներառելու պահը որոշվում է դրանց տեղաբաշխման հետ կապված կոնկրետ պայմաններով, մասնավորապես՝ սովորական բաժնետոմսերը, որոնք տեղաբաշխված են դրամական միջոցներով վճարմամբ, ներառվում են հաշվարկի մեջ՝ սկսած դրանց դիմաց դեբիտորական պարտքի առաջացման ամսաթվից.

3.11.6. Սովորական բաժնետոմսերը, որոնք տեղաբաշխված են դրանց դիմաց մասնակի վճարմամբ, ներառվում են հաշվարկի մեջ այն չափով, որքանով դրանք իրավունք են տվել մասնակցելու սովորական բաժնետոմսերի դիմաց տրվող շահաբաժիններին համեմատած լրիվ վճարված սովորական բաժնետոմսերի հետ:

3.11.7. Սովորական բաժնետոմսերը, որոնք կտեղաբաշխվեն որոշակի պայմանների բավարարման դեպքում (պայմանականորեն տեղաբաշխվող բաժնետոմսեր), ընդգրկվում են հաշվարկում այն ամսաթվից, երբ անհրաժեշտ պայմանները բավարարված են:

3.11.8. Ընթացիկ և դրան նախորդող ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար բաժնետոմսերի թիվը պետք է ճշգրտվի, հաշվի առնելով բաժնետոմսերի թվի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել առանց միջոցների (գուտ ակտիվների) համապատասխան փոփոխության (օրինակ՝ կապիտալացում, արտոնություններով թողարկում, բաժնետոմսերի տրոհում, բաժնետոմսերի միացում):


3.11.9. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը պետք է վերահաշվարկվի հետևյալ կերպ՝

3.11.9.1. եթե շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերի թիվը մեծանում է կապիտալացման, բաժնետոմսերի ձևով շահաբաժինների վճարման կամ բաժնետոմսերի տրոհման արդյունքում, կամ էլ փոքրանում է բաժնետոմսերի միացման արդյունքում, ապա մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկը բոլոր ներկայացված ժամանակաշրջանների համար պետք է հետընթաց ճշգրտվի.

3.11.9.2. եթե այդ փոփոխությունները տեղի են ունենում հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո, բայց նախքան ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, ապա այդ և բոլոր նախկին ժամանակաշրջանների համար ներկայացված ֆինանսական հաշվետվություններում մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկները պետք է հիմնվեն բաժնետոմսերի նոր թվի վրա.

3.11.9.3. մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար պետք է ճշգրտվի, հաշվի առնելով՝

- էական սխալները.
- հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները.
- իրենից բաժնեմասերի (շահերի) միացում ներկայացնող ձեռնարկատիրական գործունեության միավորման ազդեցությունները:

| | | | | |
|---|--|---------------------------------------|----------------------------------|--------------|
|  | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ</i> <i>21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն</i> <i>3</i> | <i>32/37</i> |

3.12. Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ»

3.12.1. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում կատարվում են համաձայն ՀՀՄՍ. 8-ի՝ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտում, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

3.12.2. Հոդվածների բացթողումները կամ ոչ ճիշտ ներկայացումները համարվում են էական, եթե դրանք, առանձին կամ միասին, կարող են ազդել օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա: Էականությունը կախված է բացթողման կամ ոչ ճիշտ ներկայացման չափից և բնույթից, որոնք գնահատվում են՝ հաշվի առնելով առկա հանգամանքները: Հոդվածի բնույթը կամ մեծությունը, կամ երկուսը միասին, կարող են որոշիչ գործոն հանդիսանալ:

3.12.3. Նախորդող ժամանակաշրջանի սխալները կազմակերպության մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու ոչ ճիշտ ներկայացումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

- առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.
- խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Նման սխալները ներառում են թվաբանական սխալների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման սխալների, փաստերի ոչ ճիշտ ներկայացման կամ սխալ մեկնաբանության հետևանքները և կեղծիքը:

3.12.4. Հետընթաց կիրառումը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառումն է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ այնպես, կարծես այդ քաղաքականությունը միշտ կիրառվել է:

3.12.5. Հետընթաց վերահաշվարկը ֆինանսական հաշվետվությունների տարրերի գումարների ճանաչման, չափման և բացահայտման ուղղումն է այնպես, կարծես նախորդող ժամանակաշրջանի սխալը երբեք չի եղել:

3.12.6. Պահանջի կիրառումը համարվում է անիրագործելի, երբ կազմակերպությունը չի կարողանում կիրառել այդ պահանջը դրա կատարման համար բոլոր խելամիտ ջանքերը գործադրելուց հետո: Նախորդող կոնկրետ ժամանակաշրջանի համար հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության հետընթաց կիրառումը կամ սխալն ուղղելու նպատակով հետընթաց վերաներկայացման կատարումը անիրագործելի է, եթե՝

- հետընթաց կիրառման կամ հետընթաց վերաներկայացման հետևանքները որոշելի չեն.
- հետընթաց կիրառումը կամ հետընթաց վերաներկայացումը պահանջում են ենթադրություններ կազմակերպության ղեկավարության մտադրությունների մասին, որոնք կարող էին լինել այդ ժամանակաշրջանում, կամ
- հետընթաց կիրառումը կամ հետընթաց վերաներկայացումը պահանջում են գումարների նշանակալի գնահատումներ և անհնար է օբյեկտիվորեն այլ տեղեկատվությունից տարանջատել այդ գնահատականների մասին տեղեկատվությունը, որը՝

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>33/37</i> |

– տրամադրում է վկայություն այն ամսաթվերին առկա հանգամանքների մասին, որոնց դրությամբ այդ գումարները պետք է ճանաչվեին, չափվեին կամ բացահայտվեին.

– կարող էին լինել հասանելի այն պահին, երբ այդ նախորդող ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները վավերացված կլինեին հրապարակման համար:

3.12.7. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության և հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքի ճանաչման առաջընթաց կիրառումը, համապատասխանաբար, ենթադրում է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխման ամսաթվից հետո տեղի ունեցող գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառում.

- ընթացիկ և ապագա ժամանակաշրջաններում հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքի ճանաչում, եթե այն ազդեցություն ունի նշված ժամանակաշրջանների վրա:

3.12.8. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախկինում կատարված գործառնություններից և տեղի ունեցած իրադարձություններից,

- նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համար, որոնք նախկինում տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

3.12.9. Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն պետք է ճանաչվի համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

3.12.10. Հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխության հետևանքի առաջընթաց ճանաչումը նշանակում է, որ փոփոխությունը կիրառվում է այն գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել փոփոխության ամսաթվից հետո: Հաշվառման գնահատման փոփոխությունը կարող է ազդել ինչպես միայն ընթացիկ ժամանակաշրջանի, այնպես էլ և՛ ընթացիկ, և՛ հետագա ժամանակաշրջանների շահույթի կամ վնասի վրա: Օրինակ՝ անհուսալի պարտքերի գումարի գնահատման փոփոխությունը ազդում է միայն ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի վրա և, հետևաբար, ճանաչվում է ընթացիկ ժամանակաշրջանում: Սակայն ամորտիզացվող ակտիվների օգտակար ծառայության կամ տնտեսական օգուտների սպառման ակնկալվող մոդելի գնահատման փոփոխությունն ազդում է ամորտիզացիոն ծախսերի վրա՝ ընթացիկ ժամանակաշրջանում և ակտիվի ծառայության հետագա յուրաքանչյուր ժամանակաշրջանում: Երկու դեպքում էլ ընթացիկ ժամանակաշրջանին վերաբերող փոփոխության հետևանքը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս ընթացիկ ժամանակաշրջանում: Հետագա ժամանակաշրջանում առաջացող փոփոխության հետևանքը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս հետագա ժամանակաշրջաններում:

3.12.11. Հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխության բնույթն ու գումարը, որոնք ազդեցություն ունեն ընթացիկ ժամանակաշրջանում, կամ որոնք ազդեցություն կարող են ունենալ հաջորդող ժամանակաշրջաններում, պետք է բացահայտվեն, բացառությամբ երբ հաջորդող ժամանակաշրջանների վրա ազդեցության գնահատումը անիրագործելի է:

3.12.12. Եթե հաջորդ ժամանակաշրջանների վրա ազդեցության գումարը չի բացահայտվում դրա գնահատման անիրագործելիության պատճառով, ապա կազմակերպությունը պետք է բացահայտի այդ փաստը:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|---------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>34/ 37</i> |

3.12.13. Մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ թույլ տված և հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալները, որոնք հետևանք են թվաբանական անճշտությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում թույլ տված սխալների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության, ենթակա են ուղղման, որպես կանոն, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում:

3.12.14. Բանկը ուղղում է նախորդ ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում:

3.12.15. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կատարվի, երբ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, կամ թե այդ փոփոխությունը նպաստում է Բանկի ֆինանսական հաշվետվություններում տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը:

3.12.16. Սույն Քաղաքականության փոփոխության դեպքում.

- Բանկը պետք է հաշվառի ՖՀՄՄ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող փոփոխությունը տվյալ ՖՀՄՄ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն (եթե այդպիսիք կան).
- երբ Բանկը փոխում է Քաղաքականությունը՝ կապված որևէ ՖՀՄՄ-ի առաջին անգամ կիրառման հետ, որը չի ներառում այդ փոփոխությանը վերաբերող կոնկրետ անցումային դրույթներ, կամ կամավոր փոխում է Քաղաքականությունը, ապա Բանկը այդ փոփոխությունը պետք է կիրառի հետընթաց:

3.12.17. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ այն փոփոխության, որի նկատմամբ կիրառվում է ՀՀՄՄ 8 ստանդարտի 37-րդ պարագրաֆը, պետք է ճանաչվի առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

- փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ
- փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

3.12.18. Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն պետք է ճանաչվի համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

3.13. Հաշվապահական հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքեր

3.13.1. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերը ճանաչվում են համաձայն ՀՀՄՄ 10-ի՝ և բարենպաստ, և ոչ բարենպաստ դեպքեր, որոնք տեղի են ունենում հաշվետու ժամանակաշրջանի վերջի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում են հրապարակման համար: Տարբերակվում է դեպքերի երկու տեսակ՝

- դեպքեր, որոնք տրամադրում են վկայություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանների վերաբերյալ (հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր).
- դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվետու ժամանակաշրջանից հետո առաջացած պայմանները (հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր):

3.13.2. Ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման գործընթացը կարող է տարբերվել՝ կախված կառավարման կառուցվածքից, օրենսդրությամբ սահմանված պահանջներից,

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>35/37</i> |

ինչպես նաև այն ընթացակարգերից, որոնց հետևում են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ավարտելիս:

Որոշ դեպքերում, Բանկից պահանջվում է ֆինանսական հաշվետվությունները իր բաժնետերերի հաստատմանը ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո: Նման դեպքերում, ֆինանսական հաշվետվությունները վավերացված են համարվում հրապարակման ամսաթվի դրությամբ, այլ ոչ թե ֆինանսական հաշվետվությունները բաժնետերերի կողմից հաստատելու ամսաթվի դրությամբ:

3.13.3. Հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցող դեպքերը ներառում են ֆինանսական հաշվետվությունները ներկայացման համար վավերացնելու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած բոլոր դեպքերը, նույնիսկ, եթե մինչև հաշվետվությունների վավերացնելը շահույթը կամ ընտրված այլ ֆինանսական տեղեկատվություն արդեն ներկայացվել է:

3.13.4. Բանկը պետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Դճգրտող դեպքերի օրինակներ են հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած՝

- դատարանի վճիռը, որը հաստատում է, որ Բանկն արդեն ուներ պարտավորություն հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ,
- պատվիրատուի սնանկացումը, որը հաստատում է, որ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արդեն գոյություն ուներ կորուստ՝ առևտրական դեբիտորական պարտքի գծով,
- կեղծիքների կամ սխալների հայտնաբերում, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն:

3.13.5. Սույն Քաղաքականության 3.13.4 ենթակետում նշված դեպքերում եթե էական սխալի գումարը, կախված տվյալ գործարքի կամ հոդվածի չափից և բնույթից, չի գերազանցում Բանկի հաշվեկշռային ակտիվների հանրագումարի 1 տոկոսը, և եթե այդ տեղեկատվության չբացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված ֆինանսական դրության մասին հաշվետվության մեջ փոփոխություններ չեն կատարվում:

3.13.6. Բանկը չպետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Գճշգրտող դեպքերի օրինակներ են հաշվետու ժամանակաշրջանի վերջից հետո տեղի ունեցած՝

- ակտիվների խոշոր գնումները և օտարումները կամ ակտիվների խոշոր բռնագրավումը պետության կողմից,
- ակտիվների գների կամ արտարժույթի փոխարժեքների անսովոր խոշոր փոփոխությունները,
- բնական աղետի և այլ արտակարգ դեպքերի հետևանքով արտադրական հզորությունների ոչնչացումը:

3.13.7. Եթե Բանկը բաժնային գործիքներ տիրապետողներին շահաբաժիններ է հայտարարում (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ստանդարտում) հաշվետու ժամանակաշրջանից հետո, ապա Բանկը չպետք է ճանաչի այդ շահաբաժինները որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

3.13.7.1. Եթե շահաբաժինները հայտարարվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո, սակայն մինչև ֆինանսական հաշվետվությունները հրապարակման համար վավերացնելը, շահաբաժինները չեն ճանաչվում որպես պարտավորություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, քանի որ այդ ժամանակ պարտականությունն առկա չէ: Նման շահաբաժինները բացահայտվում են

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>36/37</i> |

Ծանոթագրություններում՝ ՀՀՍՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն:

3.13.8. Բանկը չպետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվություններն անընդհատության հիմունքով, եթե ղեկավարությունը հաշվետու ժամանակաշրջանից հետո որոշում է, որ առկա է կամ Բանկը լուծարելու, կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ էլ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք

3.13.9. Հաշվետու ժամանակաշրջանից հետո գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է վկայել անընդհատության ենթադրության կիրառման՝ դեռևս տեղին լինելու հարցի դիտարկման անհրաժեշտության մասին: Եթե անընդհատության ենթադրությունն այլևս կիրառելի չէ, ապա դրա ազդեցությունն այնքան նշանակալի է, որ սույն ստանդարտը պահանջում է արմատական փոփոխություն հաշվապահական հաշվառման հիմունքներում, այլ ոչ թե սոսկ հաշվապահական հաշվառման սկզբնապես կիրառված հիմունքների համաձայն ճանաչված գումարների ճշգրտում:

3.13.10. Եթե հաշվետու ժամանակաշրջանից հետո չճշգրտող դեպքերն էական են, դրանց չբացահայտումը կարող է ազդել ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կայացրած տնտեսական որոշումների վրա: Հետևաբար, Բանկը պետք է հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքի յուրաքանչյուր էական դասի մասին բացահայտի հետևյալը՝

- դեպքի բնույթը.
- դրա ֆինանսական հետևանքի գնահատումը կամ այդպիսի գնահատում կատարելու անհնարինության մասին հայտարարությունը:

3.13.11. Բանկը պետք է բացահայտի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման ամսաթիվը և, թե ում կողմից են դրանք վավերացվել: Եթե Բանկի սեփականատերերը կամ այլոք իրավասու են ֆինանսական հաշվետվությունները փոփոխել հրապարակելուց հետո, ապա Բանկը պետք է բացահայտի այդ փաստը:

3.13.12. Օգտագործողների համար կարևոր է իմանալ, թե երբ են ֆինանսական հաշվետվությունները վավերացվել հրապարակման համար, քանի որ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում այդ ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը:

3.13.13. Եթե Բանկը հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղեկատվություն է ստանում այն պայմանների մասին, որոնք առկա էին հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ապա պետք է արդիականացնի այդ պայմաններին վերաբերող բացահայտումները՝ հաշվի առնելով նոր տեղեկատվությունը:

3.13.14. Որոշ դեպքերում, Բանկը կարիք ունի արդիականացնելու իր ֆինանսական հաշվետվություններում կատարված բացահայտումները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո ստացված տեղեկատվությունն արտացոլելու նպատակով, նույնիսկ եթե այդ տեղեկատվությունը չի ազդում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Բացահայտման արդիականացման անհրաժեշտության օրինակ է, երբ հաշվետու ժամանակաշրջանից հետո հայտնի է դառնում պայմանական պարտավորության փաստը, որն առկա էր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ի լրումն այն դիտարկման, թե արդյոք կազմակերպությունը ՀՀՍՍ 37-ի համաձայն պետք է ճանաչի կամ փոփոխի պահուստը, կազմակերպությունն արդիականացնում է պայմանական պարտավորությունների վերաբերյալ իր բացահայտումները՝ հաշվի առնելով այդ փաստը:

3.14. Թղթակցային հաշիվներ, հաշվարկներ

3.14.1. Բանկի լորո, նոստրո հաշիվների բացումը, վարումը (ներառյալ համենատագրումները) և փակումը կատարվում է Բանկում գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

| | | | | |
|---------------------|--|---------------------------------|----------------------------|--------------|
| ConverseBank | <i>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ</i> | QP 53-03 | | |
| | Հաշվապահական հաշվառման քաղաքականություն | <i>Ամսաթիվ 21.12.2012թ.</i> | <i>Խմբագրություն 3</i> | <i>37/37</i> |

4. ՍՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Սույն Քաղաքականությամբ սահմանված դրույթների ոչ պատշաճ կատարումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ և Բանկում գործող իրավական ակտերով սահմանված ձևով: